



# ԱՐԱՔՍ

ԳՐԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,  
ՀԱՍՏԱՐԱԿԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ

**ԱՐՏՈՆԱՏԵՐ՝**

ԱՆԱՀԻՏ ԻՍԱՅԱՆ

*Թերթը հրատարակվում է  
խմբագրական կազմի միջոցով  
գլխավորությամբ՝  
Մովսես Քեչիճյանի*

**ՀԱՍՑԵ՝**

ՓՈՍՏԱՐԿՂ 16765-1336  
ԹԵՀՐԱՆ, ԻՐԱՆ

**Հեռ. եւ Հեռադասժեն՝**  
8832238

**էլեկտրոնային փոստ՝**  
arax\_am@dpimail.net

# ARAX

ARMENIAN LITERARY, SOCIAL  
AND CULTURAL MONTHLY

P.O.BOX 16765 - 1336  
TEHRAN- IRAN

TEL & FAX  
0098 - 21 - 8832238

E-mail: arax\_am@dpimail.net

ماهنامه آراکس

فرهنگی، اجتماعی-ادبی

صاحب امتیاز: آنا عیساڳیان

صندوق پستی ۱۶۷۶۵/۱۳۳۶

تلفن و فکس: ۸۸۳۲۲۳۸

پست الکترونیک:

arax\_am@dpimail.net

چاپ و لیتوگرافի: هاشمیون ۲۸-۷۶۵

تکشمارة: ۲۵۰۰ ریال

ՀԱՏՍՎԱԾԱՌ 2500 ՌԻԱԼ

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՊՐԻԼՅԱՆ ԽՈՍՔ .....	3
ԱՐԳԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՂԹԵՑ.....	4
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ.....	5
ԳԱՂՈՒԹԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ.....	6
ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՄՈՒԼ .....	9
ՎԱՆԱԶՈՐԸ ԵՎՍ ԾԱՆԱԶՈՒՄ Է ՀԱՀԳԲ-Ի ՀԵՐՈՍՆԵՐԻՆ.....	11
ԿԱՐԾ ԼՈՒՐԵՐ.....	13
ՄԵՂՐԻՆ ԿՈՐՑՆԵԼՈՒ ԳԵՊՔՈՒՄ ՍՏՐԿՈՒԹՅԱՆ ԵՆՔ ՏՐՎՈՒՄ ԹՈՒՐՔԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻՆ.....	19
ՀԱՅԱՍՏԱՆ, ԻՐԱՆ ԵՎ ՀՈՒՆԱՍՏԱՆ ԱՐՏԳՈՐԾ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՀԱՆԳԻՊՈՒՄԸ.....	21
ՏԵՂԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ.....	22



# ԱՄԻՆՅԱՆ

**Յ**այոց ցեղաստանության իրականացումից եւ Արեւմտահայաստանի բռնագրավումից 86 տարիներ հետո ցեղաստանության իրողության ընդունել-չընդունելու խնդիրը փակցվում է տարբեր միջազգային ու ազգային ասյաններում, կորուստի մասնելով Հայկական դաշտանողական շարժումների եւ դժբախտաբար նաեւ հայ անգիտակցի զանգվածների բանականությունը:

86 տարիներ հետո, հայոց ցեղաստանությունը բարունակ փակցվում է ամերիկյան կոնգրեսի կուլիսների եւ ատարանների միջեւ, որին իսես մեր դաշտանողական շարժումների փողակական շարժումները առանց իսկ դիմադրելու ենթարկվում ու արքեցած այն ավելիով խուսուրացած ու զարդարված ներկայացնում են ժողովրդին, վերջինիս դաշտանցաիրական դաշտարից հեռացնելու նենգամտությամբ:

Ճանաչում ու չեն ճանաչում ցեղաստանությունը.

Ճանաչում են ցեղաստանությունը, առանց դասատարելու ցեղաստանին.

Ճանաչում են ցեղաստանությունը, առանց հաւվեսու նկատելով ցեղաստանի ժառանգորդներին:

Ճանաչում են ցեղաստանությունը: Այո, բայց ոչ մի իրավումն չեն վերատախում ցեղաստանության ենթարկված ժողովրդին:

Նույն ժամանակ հանուն սուս «մարդասիրության» դյուրություններ են ստեղծում արագադրի ցուղը ձեռն առած հայի համար, հային ավելի սփյուռնացնելու եւ աստիճանաբար փայթելու միտումով:

Ուրեմն մեր ժողովրդի առջեւ դրված է մի հիմնական հարց.

ի՞նչ անել... Այս հարցին ազգովի ունենմ երկու դասսխան.

**«Հայերի համար ավելի լավ կլիներ, եթե եվրոպական դեմոկրատիաները, կառավարությունները եւ դիվանագետները բնավ չզբաղվեին նրանց գործերով»:**  
*Ֆրեյդիխ Նանսեն*

ա- Սփյուռնանալ, լուծվել, ձուլվել եւ վերջակես դնել որդես հայ ամբելու զարդաիրին, որը նեանակում է ընդունել թրական ազգայնանողության ու Ֆաականողության վճիռը: Այսինն ինննաստան լինել ազգովի:

բ- Պայտարել եւ վերատիրանալ հայոց հողին՝ գոյատեւան իրավումն ձեռք բերելու

նամ նաեւ, որ 1915-ի ամբիլը ուղղակի հեսեւանն էր 1908-ի սխալ համաձայնության, որի հեսեւանով ժամանակի հայ կուսակցությունները թողնելով հայկական դաշտարը խառնվեցին երիտուրերի «հեղաիրոխության» ու դառնամենական ընտրությունների խաղերի մեջ, անլացրին Ֆե-

**Մեր դաշտանցած սահմանները Հ.Ա.Հ.Գ. Բանակի հիմնադիրներից Հակոբ Հակոբյանը Լիբանանի Ալ-Հավաղես արարատքերի հես սաուլիսի ժամանակ 12-փես. 1982 թ.**

Ալ-Հավաղես.- Որո՞նք են ձեր դաշտանցած դեմոկրատիան սահմանները:

Հ. Հակոբյան.- Մեր դաշտանցած դեմոկրատիան սահմաններն են, 1920-ի Մերի դաշտանցի ձեւված սահմանները, որոնք հեսազային դրժվեցին 1923-ի Լոզանի դաշտանցով, Մերի սահմանների մեջ մնում են՝ Էրզրումի, Վանի, Բիրիսի, Կարսի, Արսահանի, Տրադիզոնի նահանգները եւ Արարատքերը: ... Բայց ոչ մեկ դեմոկրատիան չախատեց իրականացնել դա: Անուես մեկնելով իրենց սահերից, նրանք խաղում են ժողովրդների հարցերով:

համար: Բանի դասնությունը փաստել է, որ երբ մի ժողովուրդ չի դաշտարում իր արդար իրավումների համար

դաշտանցական դաշտարը, հայ ժողովրդին թողնելով լրիվ անդաշտանցական դիրտերում: Ուրեմն զգաս լինենք եւ

**«Հայկական սահերիցության տեսում ես ավելի կարեւոր եւ սարատիելի նդասակներ գոյություն ունի: Այդ նդասակներից ամենագլխավորը Հայաստան կոչված հողերի ազատագրումն է, որտեղ թեւ ես փչ հայեր են բնակվում, սակայն այդ տարածքի վրա մինչեւ Պարսից ծոցի շարանը հասնող հարմար օդակայաններ կան:**

... Իսկ համախ ես հսակ կերով սավում է, թե Հայաստանի Ազատագրության Հայ Գաղսնի Բանակի նդասակն է ազատագրված հողերը ՆԱՏՕ-ից անջատել եւ կցել Խորհրդային Հայաստանին»:

*ՄՄՆ-ի նախկին նախագահ Ջիմի Քարթերի խորհրդական Գոկս. Փոլ Հենցե, նոյեմբեր 1982*

նա դասատարված է մահվան եւ ուե կամ եուս հիւվելու է միայն դասնության գրտերում, վկան արդեն իսկ մոռացության մասնված հզոր դեմոկրատիաներն ու ազգերը:

Վերջին հաւվով չմոռա-

դասնությունից դաս առնենք: Ամբիլը զալիս է եեեսելու, որ մեր ազգի փրկության միակ ճիւես ձամբան կազմակերոված ինննատաշտանությունն է: Առ այդ մենք դաշտանցատիրական մեր





# Պատմության համար



«**Թ**ող մեղանչած ըլլամ իմ եւ իմ կուսակցութեան առջեւ, բայց խիղճս կըրտէ թէ 1908-էն յետոյ մենք յիշի լինէինք Օսմանեան Յեղափոխականներու Դաւանակցութիւն»:

«Հայ յեղափոխականի մը յիշատակները»  
Ռուբեն, Ե. Հասոր, էջ 45, Թեհրան 1982

«**Ս**խալ է այն կարծիքը թէ մենք հայերս քիչ դեր ունէինք Օսմանեան սահմանադրութեան մէջ, իսկ ատելի սխալ է այն, թէ մենք հանդիսատես յղեցք է ըլլայինք եւ յենարան յղեցք չէ դառնայինք սահմանադրութեան եւ Իթքիհասի»:

նույնը, էջ 41

«**Հ**.Յ.Դաւանակցութիւնը դարձնել Յեղափոխական Դաւանակցութիւն առանց հայ քառնին, այս գաղափարը ոմանց մտքին կուգար ու կ'երթար առանց կեանքի մէջ իրագործելու. սհա այս չիրագործելն էր մեր յանցանքը, ոչ թէ այն, որ մենք փորձեցինք համաձայնիլ Իթքիհասի հետ»:

նույնը, էջ 44

«**Բ**այց մեր սխալը անոր մէջ էր, որ մենք չկրցանք ազատագրուիլ մեր ազգային կազմակերպական մասնակի ձեւէն ու ազգային մասնակի յառանջներէն: Երբ Օսմանեան ժողովուրդներու մէջ, մասնաւորապէս թուրքերու եւ քիւրտերու աչքին սահմանադրութիւնը կը վերագրուէր մեզի, երբ մենք էինք անոր հաւատարիմ յենարանը, մենք չկարողացանք ըմբռնել մեր ուժն ու դերը, չկարողացանք խորացնել Իթքիհասի յալասական, զինուորական յեղաբեզումը ու դարձնել զայն ժողովրդական յեղափոխութիւն»:

նույնը, էջ 41-42

«**Ի**թքիհասի համօսմանեանականութենէն դէմի համիլանականութիւն եւ համաթուրանականութիւն հակելու յանցանքը յղեցք է որոնել ոչ միայն թուրքերու, այլ եւ Օսմանեան յետեւեան քաղակացուցիչ ազգերու՝ ալթանացիներու, մակեդոնացիներու, յոյներու, յուլկարներու, արաբներու եւ հայերու մէջ, որոնք ընդհանուր յետեւեան ամբողջութեան յառաջանման հողէն զուրկ, ատելի սարածուած էին իրենց մասնակի Եսիերու աղաւաղման մտնողութեամբ»:

նույնը, էջ 42-43

«**Մ**ենք (Հ.Յ.Դ) հաւատում ենք, որ Թիւրքիստան կասարած վերիվայրումը երիթուրքերի հեղափոխութիւնը հասուն, գիտակից սարբերի գործ է, աշխարհաւէն, մնայուն մի գործ եւ ոչ «սուրկների յեղափոխութիւն», որոնք մի սիրոջ սաղալելուց յետոյ, յոժարական մասնում են իրանց՝ սերերի կամայականութիւն»:

ՀՅԴ յաւատարմութիւն՝ «Դրօսակ»  
թիվ 9-10 Սեղոյս. նոյնն. 1908 Ժնն

## Լինենք խոհեմ ու զգաս, երբ փորձում ենք ներկայացնել համահայկական հույժ կարելու մի խնդիր

**Ը**ս «Թեհրանի Հայոց Թեմի Մեծ Եղեռնի 86 ամյակի ոգեկոչման հանձնախումբի» հրատարակած հայտարարության ելույթում մարմնի կողմից բաժանված հրավերների, նախատեսված էր ապրիլի 20-ի երեկոյան ժամը 16-ից 20-ը, «Հայ Ակումբի» սրահում, կայացնել մի գիսաժողով՝ «1915-ի Ապրիլ. Հայացք դրսից» խորագրով:

Ըս ծրագրումի սույն գիսաժողովին դիմողները ներկա լինեն իսլամական խորհրդարանի ղազախներ, ղարախներ, մսավորականներ ու հայ համայնքի ներկայացուցիչներ:

Նմանափող միջոցառումները, Երևանում և մասնավորապես նկատի ունենալով որ Հայոց Եղեռնը դեռ է ներկայացվի ոչ միայն հայկական սահմանափակ շրջանակներում, այլ ղազախական փաստացի սվախների վրա այն բացառվի այլ ժողովուրդների, այս ղարազախում ղարախախտս մեր հայրենակիցների համար:

Սակայն մի ֆանի ժամ մնացած միջոցառումի բացմանը, կազմակերպիչները հեռախոսային կաղ հաստատելով հրավիրյալների հետ, առանց որևէ ղազախառաքանության հայտարարեցին որ միջոցառումը չի իրականացվելու:

Հասկանալի է, որ նույն օրը (Ապրիլ 20-ին) ել գրեթե նույն ժամերին Հայ Համալսարանականների Ընդ. Միության հավաքակցություն կազմակերպվել էր գեղարվեստական ու դասախոսական երեկո, մասնակցությամբ Հայաստանից հրավիրված հյուրերի, կրոնական ու համայնքի արբեր մարմինների ներկայացուցիչների:

Նկատի ունենալով սույն ձեռնարկի զուգահեռությունն ու աչքի գցելով Մեծ Եղեռնի 86-ամյակի առթիվ կազմակերպված ձեռնարկների ցանկը, որտեղ չէր նշվել վերոհիշյալ գիսաժողովի ներկայացման մասին, բոլորիս ենթադրել է սալիս, որ այն կազմակերպվել է հաղձեղ ու Եսաղ:

Նմանափող գիսաժողովի կարելությունը անժխտելի մի իրողություն է, ել նկատի ունենալով որ այն կազմակերպվելու էր առաջին անգամ, հարց է առաջանում՝ կազմակերպիչ անձինք ինչու այդքան հաղձեղություն ցուցաբերեցին նման ձեռնարկի կազմակերպման հարցում: Խոսքը ոչ թե մի միության ղարզ ձեռնարկի մասին է, այլ՝ «Հայոց Եղեռնի»: ղասահածը մեզ ենթադրել է սալիս մսածելու, որ եթե անգամ սույն գիսաժողովը տեղի ունենար, ինչ մակարդակ ու բովանդակականություն էր ներկայացնելու իրենից:

*Լինենք խոհեմ ու զգաս, երբ փորձում ենք ներկայացնել համահայկական հույժ կարելու մի խնդիր:*



## «Ազնվություն ցուցադրողները» կարդան

**Ա**յս արի ել անցյալ արիների նման 24 ապրիլի ձեռնարկներին մասնակցելու համար Հայաստանից Իրան էին հրավիրվել Հ.Յ.Դաճնակցության անդամներից մեկ-երկուսը, թե ում կողմից էին հրավիրվել մեծաղախիվ կուսակցական գործիչներ, ոչ մի բացառություն չի ներկայացվել, բայց անցյալ արիների փորձից կարող ենք ասել որ նրանք Իրան էին եկել *ԹՀԹ Թեմական Խորհուրդի կողմից կյանքի կոչված «Մեծ Եղեռնի 86 ամյակի ոգեկոչման հանձնախմբի»* հրավերով: Մեծաղախիվ հյուրերի կուսակցա-



կան ղասկանելիությունը գալիս է մեկ անգամ ելս աղացուցելու, որ նման «Հանձնախմբերը» ոչ այլ ինչ են, եթե ոչ՝ մի կուսակցության ղորողականության մարմին: Հոգ չէ, թե հաղիվ մի ֆանի ամիս առաջ տեղի ունեցած 12-րդ ղազախամավորական ժողովի ընտրությունները, անուրԵՏ այն էլ «ժողովրդավարական» համես սկզբունքներով, մեծ խանդավառություն էր ստեղծել, «Ազնվություն ցուցադրող» մեր սիրելի երիտասարդ մսավորականներից (*անցյալում ձախ. այսօր չգիտենք*) մի ֆանիսի մոս:

# Պարսկերեն դասախոսությունը նվիրված Մեծ Եղեռնին



Ամբիլ 17-ին ՀՈՒՍԿ հասարակության եւ Հայ Հասարակական Միության համատեղ նախաձեռնությամբ «Հայ Ակումբի» սրահում տեղի ունեցավ դասախոսական երեկոյի պարսկերեն լեզվով:

Սկզբում օրվա գրուցավար տիկ. Սեդա Դավթյանը բանախոսներին ներկայացրեց հետեւյալ հերթականությամբ՝

1- Հարավային իրանահայության իսլ. հորհրդարանի ղեկավար տիկ. Ժորժ Աբրահամյան

2- Պարսիկ մտավորական եւ գիտատեսաբան տիկ. Քավեն Բայաթ

3- Իրավաբան դոկտ. Այրա Հովանիսյան

Առաջին բանախոսը միշտ սար Եղեռնի ղեկավարները եւ ներքին հիմնական ղեկավարները: Բանախոսությունն անհաջող էր, լի սխալներով եւ երեւակայական տեսություններով. օրինակ՝ ի զարմանս ներկաների նա հայտարարեց եւ կրկնեց որ Հայկական Լեռնախարհում հայոց ղեկավարները

ներքինը տեղի է մինչեւ 16-րդ դար:

Երկրորդ բանախոսը ուսումնասիրողի իր հրմտությամբ հանգամանորեն ներկայացրեց հայոց ցեղասպանության ճանաչման ու ժխտման ղեկավարները՝ Եղեռնից մինչեւ այսօր:

Շատ տղամարդիկ արտահայտեցին բերրի բանախոսը, որ իրավաբանական կուռ տրամաբանությամբ եւ փաստերի հիման վրա աղացուցեց հայոց ղեկավարության արդարացիությունը:

Ձեռնարկը հասկալի էր ցահավեց էր նրանով, որ Եղեռնի մասին խոսվում էր ղեկավարներով՝ հորհրդարանի ղեկավարների եւ մեծ թվով ղեկավար հյուրերի համար: Ձեռնարկը ցատ հաջող կլինե՞ր՝ եթե չլինե՞ր տիկ. Ժորժ Աբրահամյանի թույլ ելույթը: Ուշագրավ էր, որ փորձառու մասնագետներ տիկ. Բայաթն ու դոկտ. Հովանիսյանը իրենց նյութը առավել հաջող ներկայացնելու համար օգտվում էին իրենց

նրա գրություններից, այնինչ անփորձ ղեկավարները փորձեցին անգիր ճառել մի նյութի մասին, որից անտեղյակ էր: Թերեւս լավ կլինե՞ր որ նորընտիր ղեկավարները իրեն ղեկավար որդես մեծահարգ ղեկավար, այլ ոչ թե դառնար սնանկ ղեկավար:

Իսկ եթե հարկ է լինում որ մեր «ազգային» ղեկավարները ղեկավարական կարգով բացման կամ փակման մի երկու խոսք ասեն իրենց մասնագիտությունից դուրս հարցերի ցուրջ, աղա հանձնարարելի է որ նախադաս նրանց ձեռքը տան մեղաբան մի երկտեսող, որդեսագի ամբիոնից սահում ընթերցեն եւ հայ ներկաներին ամոթով չթողնեն:

## ԳԼԽԱՑԱՎԱՆՔ

### Ի՞նչով է զբաղված «Ղեկավարական ժողով»-ը

Արդեն երկար ժամանակ է, որ Թեհրանի Հայոց Թեմի 12-րդ Ղեկավարական ժողովը դադարացրել է իր ժողովները: Ըստ լավատեղյակ աղբյուրի ֆանի որ սույն ժողովների ընթացքում արձարծվում է մեր հարգելի «ազգային ղեկավարներին» ոչ ցանկալի եւ դժգոհիչ հարցեր, ուստի գործադրվում է «ամենաժողովրդավար» միջոցը՝ հետաձգել ժողովների կայացումը, ղեկավարներին, որ գործերը ղեկավարելու եւ համարելու է Թեմական հորհուրդը, իսկ ֆանի որ վերջինիս բոլոր անդամները բառի բուն իմաստով

«համախոհ ազգայիններ» են, ուստի այնտեղ գործերը ընթանում են «բնական», առանց որեւէ ավելորդ գլխացավանքի:



«Ղեկավարական ժողովի» նիստերի հետաձգման ընթացքը տեղի է ունենում այն ժամանակ երբ 15 տարի ձգձգումից հետո ներկա մարմինը դեմահանդիման է գտնվել գաղութում առկա կրթական, հասարակական ու իրավական տարբեր խնդիրների դիմաց, ինչպես նաեւ թեմի նոր կանոնադրության, ֆնմարկման ու նոր կանոնադրության հաստատման անձամանցելի հարցին:

## **Մեծ Եղեռնի բյուրավոր նահասակների ոգեկոչման ձեռնարկ ԲաՖՖի համալիրում**

**Յ**այոց Մեծ Եղեռնի բյուրավոր նահասակների ոգեկոչման առիթով Թեհրանահայ սարքեր միություններում կազմակերպվեց դասախոսություններ ու գեղարվեստական միջոցառումներ:

Ապրիլ 26-ի երեկոյան ժամը 7:30-ին արդեն բավական ժողովուրդ էր լցված ԲաՖՖի համալիրի մեծ սրահը, միության երգչախումբը, երեքից ֆան սարեկան երեխաներ, շարվել էին բենի վրա ու Տերունական աղօթքով սկսում են ձեռնարկի բացումը. Մահը լուռ եւ հոճակայս լսում է նվագով ուղեկցող մեղեդին, որից հետո երգվում է Մեր Հայրենիքը:

Այդ բացման խոսքով բեն է հրավիրվում միության մշակութային եւ սկաուտական բաժնի վարիչ Պրն. Ազատ Հակոբյանը: Պրն. Հակոբյանը բարի գալուստ նաղթելով ներկաներին օրվա առիթով ԲաՖՖի միության խոսքն է ուղղում հանդիսատեսին եւ սեղմ տողերի մեջ բացատրում է Ադրիյան արհավիրքը:

Այդ բեն է հրավիրում օրվա բանախոս, «Արաֆս» ամսագրի գլխավոր խմբագիր՝ Պրն. Սուվսե Քեչիչյանը. որը հակիրճ կերպով անդրադարձավ ցեղաստամության սարիների զարգացումներին՝ նորագույն դասակարգման արժանի ծնունդին եւ այն անցողիկ ճանապարհի վրա անհասնելի ցեղի եւ ունեցել եւ դեռ շարունակվում են Հայ Դատի դասակարգման արժանի:

Պրն. Քեչիչյանը խոսեց նաեւ արագադրի բերած աղետի մասին եւ իր խոսքը փակելու դասին հիշեցրեց որ իրավունքն անդաման ուժ չի ստեղծում բայց ուժը իրավունք է ստեղծում:

Օրվա խոսքերից հետո ձեռնարկը շարունակվեց երգերով, արտասանությամբ ու դարերով, մեծ ազդեցություն թողնելով ներկաների վրա:



## **ՀԲԸՄ-ի Ադրիյան Ձեռնարկները**

**Ի**նչդեռ թեհրանահայ մյուս միությունները «Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության» կանանց բաժինը նաեւ Ադրիյան եղեռնի առիթով կազմակերպել էր հասուկ ձեռնարկ՝ Ֆիլմի ցուցադրում եւ դասախոսություն:

Հիշյալ ձեռնարկը, որ կայացավ ապրիլի 29-ին սկսվեց Ֆիլմի ցուցադրումով այդ միության կանաց բաժնի նախագահուհի եւ խոսնակ Տիգրան Ասողիկ Բաբայանը բացատրություններ սվեց Հայոց Ցեղաստամության եւ հայ ժողովրդի ներկա դրամաների մասին: Տիգրան Բաբայանը իր խոսքերում կարեւորեց հայ ժողովրդի ինքնության դասակարգման եւ միասնության հարցը:

Այդ բեն հրավիրվեց օրվա բանախոս «Արաֆս» ամսագրի գլխավոր խմբագիր Պրն. Սուվսե Քեչիչյանը: Բանախոսը նախ ողջունեց ՀԲԸՄ-ի սարած ազգանվեր աշխատանքը սփյուռքում եւ Հայաստանում այդ օրվա առիթով խոսեց հայոց ցեղաստամության ճանաչման եւ այդ առումով մեր անելիքների մասին:

Նա իր խոսքերում անդրադարձավ այն վնասների մասին որ ցեղաստամության անորոճ ճանաչումը կարող է հասցնել հայկական դասակարգմանը: Նա լուրջեց, որ ցեղաստամության ճանաչումը առանց հայ ժողովրդի ոճանահարված իրավունքների ընդունման եւ ցեղաստամի դասադասման նշանակում է համբերություն ցանկանալ եղածը չսանելու համար եւ մոռացության թաղ հայ ժողովրդի արդար դասակարգմանը:



*ՀԲԸՄ-ի կողմից Մեծ Եղեռնի 86-ամյակին նվիրված որմագրը:*



**Գալիս ու գնում են**

Նոյյան տապան - Անցած տարվա ընթացքում Հայաստանից մեկնել են 438 հազար, ժամանել՝ 387 հազար մարդ: Ավիացիայով մեկնողները կազմել են 318 հազար, ժամանողները՝ 292 հազար մարդ: Երկաթուղով 20 հազար մեկնել են, 8 հազարը՝ ժամանել, իսկ ավտոտրանսպորտով մեկնել են 100 հազարը, ժամանել՝ 87 հազարը:

*Հայաստանի Հանրապետություն  
18.4.2001*

**Խոսքը ԼՂ ինքնավարության մասին էր**

«Բուշը խրախուսում է կոնֆլիկտի լուծումը նավթով հարուստ շրջանում»՝ այսպիսի վերնագրով է ապրիլի 10-ին «Ռոյթերս» գործակալությունը տեղեկատվություն տարածել Զի Ռուսթի բանակցությունների վերաբերյալ: Ըստ «Ռոյթերսի», բանակցությունների սեղանին էին հետեյալ թեմաները. Հայաստանի վիճելի ուժերի ներկայությունը՝ վիճելի տարածքում, ճանապարհների ապաշրջափակումը, փախըստականների վերաբնակեցումը, ինչ կարգի ինքնավարություն է ստանալու Լեռնային Ղարաբաղը:

*Առավոտ 17.4.2001*

**Օտարերկրյա կապիտալով ներդրումներ Հայաստանում**

Նոյյան տապան - 2001թ. տարեսկզբի դրությամբ 73 երկրի ծագմամբ օտարերկրյա կապիտալով հայաստանյան իրավաբանական անձանց /ԻԱ/ ներդրումները ՀՀ-ում կազմել են 151,9 մլրդ դրամ /շուրջ 300 մլն ԱՄՆ դոլար/: Ըստ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության, ամենից ավելի ներդրվել է ռուս

սական կապիտալը /79,87 մլրդ դրամ/, ապա՝ ֆրանսիական /27,5 մլրդ դրամ/, սինգապուրյան /11 մլրդ դրամ/, ԱՄՆ-ի /9,7 մլրդ դրամ/ եւ Կիպրոսի /4,8 մլրդ դրամ/ կապիտալը: Եվս 7 երկիր ՀՀ-ում ներկայացված են 1-2 մլրդ դրամ կապիտալով:

ՀՀ-ում գրանցվել է օտարերկրյա մասնակցությամբ 1770 ԻԱ եւ զուտ օտարերկրյա հիմնադիրներով 2206 ԻԱ: Օտարերկրյա մասնակցությամբ ամենից ավելի ԻԱ է գրանցվել Իրանի /406/, Ռուսաստանի /381/, ԱՄՆ-ի /220/, Ֆրանսիայի /73/, Լիբանանի /57/ մասնակցությամբ:

Չուտ օտարերկրյա հիմնադիրներով ԻԱ-ների թվում առաջնությունը նույնպես պատկանում է Իրանին /604/, Ռուսաստանին /406/, ԱՄՆ-ին /257/:

ՀՀ-ում գրանցված օտարերկրյա մասնակցությամբ ԻԱ-ների թվում կան այնպիսիք, որոնց հիմնադիր կապիտալը գրանցված է, օրինակ, Բահամյան, Մեյջելյան եւ բրիտանական Վիրգինյան ու Կայմանի կղզիներում, ինչպես նաեւ Մոնակոյում, Սինգապուրում, Բելիզում:

*Երկիր 17.4.2001*

**Չկայացած լրտեսը**

Թուրքիա իր այցելության մասին Նաիրի Հունանյանը 2000թ. հունիսի 7-ին իր ցուցմունքում իր ձեռքով գրել էր. «Մեզ հավաքագրելու փորձ չի եղել եւ մնան առաջարկ չի եղել: Իսկ եթե լինե՞ր եւ կհամաձայնե՞ր, որովհետեւ հենց այդ նպատակով էլ մեր ԱԱ նախարարության աշխատակիցների հետ համագործակցելով ավելի ուշ փորձում էինք մնան կոնտակտներ ստեղծել, նկատի ունենալով, որ մեր ԱԱՆ-ի տվյալներով թուրքերն էլ հետաքրքրված էին ինձնով

եւ իմ մասին տվյալներ էին հավաքում»: Նա հավելել է, թե «նման կապ եւ համագործակցություն ստեղծվելու դեպքում թուրքերը հաստատ կտուժեին», ու նաեւ՝ «Ես վստահ եմ, որ կարող էի նրանց օգտագործել»:

*Առավոտ 17.4.2001*

**Եվ դարձյալ՝ պատերազմի ուրվական**

«Ղարաբաղի ազատագրություն» ադրբեջանական կազմակերպության փոխնախագահ Ազալովը հայտարարել է. «Բանակցությունները խնդիրը չեն լուծի: Հարկավոր է կազմել հզոր բանակ»: Ըստ ադրբեջանական մեկ այլ՝ «Լաչին» ընկերակցության նախագահի՝ խաղաղության բանակցությունները չունեն որեւէ հեռանկար. խնդիրը կլուծվի միայն պատերազմով»: Ալիեյը, Բաքու վերադառնալուց հետո, նույնպես չի բացառել պատերազմի հնարավորությունը. «Պատերազմը մի բան է, որ երբեք չի կարելի բացառել: Սակայն այս պահի համար չեմ զգում պատերազմի անհրաժեշտություն»:

*Առավոտ 18.4.2001*

**Համագումար**

Մայիսի 14-ին նշանակված է Գրողների միության հերթական համագումարը: Գրողական կրթերը, բնականաբար, լարված են: Գրողների միության նախագահի մի քանի թեկնածուի անուն է այսօր շրջանառվում՝ արձակագիր Ռուբեն Հովսեփյան, «Գարուն» ամսագրի գլխավոր խմբագիր Լեվոն Անանյան եւ ՀԳՄ քարտուղար Աբգար Ափինյան: Թեկնածուներից յուրաքանչյուրն ունի իր համակիրները:

*Հայկական ժամանակ 21.4.2001*

**Պուտինի միջնորդությամբ  
Քոչարյան-Ալիե**

**հանդիպումը չի բացառվում**

Ենթադրաբար՝ Մինսկում, հունիսի 1-ին ՀՀ նախագահի մամուլ խոսնակ Վահե Գաբրիելյանը երեկ «Ազգին» հայտնել էր, որ ՌԴ նախագահ Պուտինի միջնորդությամբ Քոչարյան-Ալիե հանդիպման պայմանավորվածություն չկա: Ինչպես նշել էինք, Մոսկվայում գտնվող Ադրբեջանի Միլի մեջլիսի խոսնակ Մ. Ալեքսերովը հայտարարել էր, թե մինչև նախագահների ժնեյան հանդիպումը, որը նախատեսվում է հունիսի առաջին կեսին, Քոչարյանն ու Ալիեը կբանակցեն Պուտինի միջնորդությամբ:

Ադրբեջանական մամուլը պնդում է, որ Հայաստանի եւ Ադրբեջանի առաջնորդները ժնեյան հանդիպումից առաջ հնարավորություն կունենան դարաբաղյան կարգավորման խնդիրը քննարկելու, բայց ոչ թե Մոսկվայում, ինչպես ենթադրվում էր, այլ՝ Մինսկում: Հունիսի 1-ին Բելառուսի մայրաքաղաքում կկայանա ԱՊՀ երկրների ղեկավարների հերթական գագաթաժողովը: Չի բացառվում, որ Պուտինն այդ օրը միանա Քոչարյան-Ալիե հերթական հանդիպմանը:

*Համառոտ  
Ազգ 19.4.2001*

**Ադրբեջանն ամենուր  
«գրավյալ» տարածք է  
տեսնում**

Հայաստանի ու Իրանի միջեւ քննարկվում է Արաքս գետի վրա հիդրոէլեկտրակայանի կառուցման հարցը: Թեեւ հիդրոէլեկտրակայանը Հայաստանի եւ Իրանի սահմանի վրա՝ Մեղրիի հատվածում է կառուցվելու, Բաքուն մտահոգված է «գրավյալ տարածքների» ճակատագրով, որոնք «կարող են շինհրապարակի վերածվել»:

Ադրբեջանական «Էխո» թերթը նշում է, որ օրերս Իրանի էներգետիկայի նախարարը Հեյդար Ալիեի հետ հանդիպման ժամանակ նրան տեղյակ է պահել Արաքս գետի վրա Հայաստանի հետ համատեղ հիդրոէներգետիկ կառուցելու ծրագրի մասին: Ընդ որում, խոսքը գնացել է գրավյալ տարածքների շուրջ, նշում է թերթը: «Ադրբեջանի նախագահի գալույթին ի պատասխան իրանցի հյուրը առանց ամոթի ու շփոթվելու հայ-

տարարել է՝ եթե դուք շուտ ազատագրեք ձեր հողերը, սպա մենք կսպասենք, սակայն եթե գործընթացը երկարի, սպա, ներող կլինեք, մենք շինարարությունը Հայաստանի հետ ենք սկսելու», Իրանի նախարարի խոսքերը մեջբերում է «Էխո»-ն:

Շինարարությունը դեռ չի սկսվել, սակայն այս կարգի դատողություններն ադրբեջանցիներին հիմք են տալիս մեղադրելու Իրանին «գրավյալ տարածքների հարցում» Հայաստանին սատարելու մեջ:

*Ազգ 19.4.2001*

*Վ. Օսկանյան.*

**«Հայաստանը մերժում է  
Ղարաբաղը Ադրբեջանի  
վարչական տիրապետության  
տակ թողնելու գաղափարը»**

Հայաստանի արտգործնախարար Վարդան Օսկանյանը «Ռոյթերին» տված հարցազրույցում ասել է, որ Հայաստանը մերժում է Լեռնային Ղարաբաղը Ադրբեջանի վարչական տիրապետության տակ թողնելու գաղափարը, սակայն չի բացառում Ղարաբաղը զուտ անվանապես Ադրբեջանի կազմում թողնելու հնարավորությունը: «Որեւէ ենթակայություն Ադրբեջանի եւ որեւէ ուղղահայաց հարաբերություն Ադրբեջանի հետ մենք Ղարաբաղի համար չենք ընդունի», ասել է Օսկանյանը՝ ավելացնելով սակայն, որ հորիզոնական կապերի շուրջ որեւէ առաջարկ լրջորեն կքննարկվի Հայաստանի կողմից:

*Ազգ 27.4.2001*

**Միջադեպ ադրբեջանա-  
իրանական սահմանում**

*ԵՐԵՎԱՆ, 26 ԱՊՐԻԼ, ԱՐՄԵՆՊՐԵՍ.*

Ադրբեջանցի 19-ամյա սահմանապահ է զոհվել, երբ մի խումբ անհայտ անձինք փորձել են հատել Իրանի եւ Ադրբեջանի միջեւ պետական սահմանը:

Ադրբեջանի ազգային անվտանգության նախարարության մամուլի ծառայության հաղորդման համաձայն, Ռամիլ Լալաեյը եւ Մամուկա Թարթարաշվիլին ապրիլի 24-ի վաղ առավոտյան նկատել էին սահմանախախտների մի խումբ: Ի պատասխան հանձնվելու առաջարկի, նրանք զինված դիմադրություն են ցուցաբերել: Անհավասար

պայքարում սպանվել է ադրբեջանցի զինվորը: Հարեւան պահակակետից ադրբեջանցի սահմանապահներին խույն օգնության են հասել: Տեսնելով դա՝ խումբը ետ է նահանջել Իրանի տարածք: Ադրբեջանական ANS գործակալության հաղորդմամբ, դեպքի առնչությամբ քրեական գործ է հարուցվել, իսկ ադրբեջանական կողմը Թեհրանին բողոք է ներկայացրել:

*Ազգ 27.4.2001*

**Ադրբեջանը պատերազմը  
վերսկսելու թույլտվություն է  
խնդրում ՄԱԿ-ից**

Ադրբեջանի քաղաքական ուժերը քննարկում են ՄԱԿ-ին դիմելու առաջարկը՝ Հայաստանին «ազրեսոր» ճանաչելու մասին: «Ղարաբաղի ազատագրման կազմակերպությունը», որը խնդրի ռազմական լուծման ջատագովն է, մանրամասն ուսումնասիրելով ՄԱԿ-ի Խարտիայի հոդվածները, եկել է այն եզրակացության, որ միջազգային իրավունքի տեսակետից Ադրբեջանը կարող է պատերազմելով «ազատագրել Ղարաբաղը»: Բայց դրա համար Բաքուն նախ պետք է դիմի ՄԱԿ-ին եւ հայտարարի, որ Հայաստանի հետ հակամարտության խաղաղ լուծման ճանապարհը ձախողվել է: Այնուհետեւ ՄԱԿ-ը, ելնելով միջազգային իրավունքի դրույթներից, Հայաստանին ազրեսոր կճանաչի եւ նրա դեմ պատժամիջոցներ կկիրառի, վկայակոչելով «Ղարաբաղի ազատագրման» մասնակիցներին, տեղեկացնում է ադրբեջանական «Չերկալ» թերթը: Իսկ այդ ժամանակ արդեն միջազգային հանրությունը որեւէ հիմք չի ունենա Ադրբեջանին մեղադրելու, եթե նա որոշի Ղարաբաղը ազատագրել պատերազմի ճանապարհով:

Ադրբեջանի «Վահաղ» կուսակցության առաջնորդ Քարիմիլին ասել է, թե չպետք է այլեւս որեւէ պատրանք ունենալ, թե ԵԱՀԿ-ն ուզում է լուծել խնդիրը: Ղարաբաղյան հակամարտությունը պետք է լուծվեր դեռեւս 1993-ին, երբ ՄԱԿ-ը վճռականորեն պարտադրում էր Հայաստանին դուրս բերել «գրավյալ տարածքներից»: «Չերկալ»-ն այս բոլոր դատողությունները ներկայացրել է «ՄԱԿ-ը կպատժի Հայաստանին» վերնագրի ներքո:

*Հայաստանի Հանրապետություն 28.4.2001*

# ՎԱՆԱԶՈՐԸ ԵՎ ՃԱՆԱԶՈՒՄ ՈՒ ԳՆԱՀԱՏՈՒՄ Է ՀԱՀԳԲ-Ի ՀԵՐՈՍՆԵՐԻՆ

Հայաստանի Ազատագրության Հայ Գաղսնի Բանակի (ՀԱՀԳԲ) խնկելի զինվորների հիշատակին նվիրված մեծական ցուցահանդեսը, բացված համարվեց Փետրվարի 3-ին Վանաձորում: Վանաձորի «Սպայի տունը» ջերմացել էր հին ու նոր հերոսների ներկայությունից, նրանց շնչից: Նորօրյա նվիրյալները, ովքեր ստիպված եղան մասնակցել Արցախի ազատագրման մարտերին եւ որ մեր ոչ հեռավոր անցյալի զինյալ ազատագրական պայքարի փորձն ունենին կամ էլ ՀԱՀԳԲ-ի հերոս նահատակների օրինակը, եկել էին մեկ անգամ եւս խոնարհվելու եւ հարգանքի տուրք մատուցելու ՀԱՀԳաղսնի բանակի զինվորների հիշատակին:

Հետաքրքրությունն անսահման էր, պատկառանքը՝ ի խորոց սրտի, խոնարհումը՝ խորին: Ներկաների գերակշռող մասը շատ քիչ բան զիտեր ՀԱՀԳԲ-ի նահատակների մասին, իսկ նրանց նկարները, որոշ բացառություններով, գրեթե ոչ ոք չէր տեսել: Առավել հուզիչն, ըստ իս, այն էր, որ ցուցահանդեսի այցելուներն ու լուսանկարների զինվորները, կարելի էր ասել, հասակակիցներ էին: Այդ էր գուցե պատճառը, որ ակնածանքը պարուրվել էր շփոթմունքով, եւ ներկաներից յուրաքանչյուրը մի տեսակ ամաչում էր ինքն իրենից, որ տարիներ առաջ, ավելի ճիշտ, մույն այդ տարիներին, երբ ինքն առոք-փառոք իր ուսանողական անհոգ տարիներն էր ապրում՝ սովորելով հայրենի բուհերում, Հայաստանը երբեւէ չտեսած իր հասակակիցները, իրենց կյանքի գնով, Հայկական հարցից մոռացության եւ անտարբերության փոշին էին մաքրում եւ հայաստանաբնակներիս համար մնում աննկատ:

Վանաձորի «Սպայի տան» ցուցահանդեսը, որ մշտական է լինելու, եկել է սրբագրելու սովետական ռեժիմի՝ մեզ պարտադրած բոլոր անարդարությունները:

Ստորեւ ներկայացնում ենք փոքրիկ հարցազրույցներ ցուցահանդեսի կազմակերպչի՝ «Հայկական ժողովրդային շարժման» /ՀԺԾ/ Հայաստանի ներկայացուցիչ ՎԱԶԳԵՆ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ հետ:

Հասնիկ Գուլակյան

-ՀԱՀԳԲ-ի մասին Հաստանի մամուլում հրապարակավ չի խոսվում, բայց ահա ազգային բանակում, Վանաձորի սպայի տանը բացվում է նման ցուցահանդես:

- Խնդիրը մի քիչ ավելի բարդ է, ավելի շատ հոգեբանական է: Սովետական Միության օրոք ՀԱՀԳԲ-ն եւ ՀԺԾ-ն անհասանելի էին մեր պատմաբանների եւ

տեղի ունեցել: Երիտասարդությունը միանգամից չի դիմում ծայրահեղ քայլի: Դրան անպայման նախորդում է իր նախապատմությունը: Ցավոք, այդ նախապատմությունը ոչ ոք չուսումնասիրեց: Իսկ քանի որ ՀՀ բանակի հիմնական սպայակազմում այն մարդիկ են, ովքեր ժամանակին կռվել են Ղարաբաղում, մարտնչել են հանուն



Ցուցահանդեսին մասնակցած ՀԱ Հայ Գաղսնի Բանակի նախկին անդամներ ձախից աջ՝ Ս.Նախիրյան, Վ.Սիսլյան, Գ.Գյուլալյան, Հ.Ջուլիճայան



Հայաստանի Հանրապետության բանակի զինվորները Ցուցահանդեսի սրահում

ժողովրդի համար: Հասանելի էին միայն ՊԱԿ-ի (KGB) որոշ աշխատակիցներին: Հայաստանի անկախությունից հետո, չզիտես ինչու, մեր պատմաբանները համարձակություն չունեցան այդ փակ էջերը բացելու, կատարվածը վերլուծելու, ասելու՝ հանուն ինչի է այդ ամենը

մեր հայրենիքի այդ հատվածի ազատության ու անկախության համար, նրանք իրենք իրենց մաշկի նրա զգում են՝ ինչ է նշանակում այդպիսի զոհաբերությունը եւ զոհողությունը սփյուռքի պայմանների մեջ: Այդ իսկ պատճառով ցուցահանդեսի բացումն ունեւ հատուկ նշանակու-



թյուն. առաջին անգամ Հայաստանի սպայական կազմի եւ Հայկական ժողովրդային Ծարժումի (ՀԺԸ) համատեղ ջանքերով բացվեց այդպիսի ցուցահանդես:

Այս ցուցահանդեսը մենք նվիրում ենք հայկական բանակին, որպեսզի իրենք կարողանան զինվորներին՝ նոր սերնդին ցույց տալ, ծանոթացնել մեր անցյալին, սեփական պատմությանը եւ նրանք իմանան, որ Հայաստանից դուրս կան մարդիկ, երիտասարդներ, ովքեր պատրաստ են իրենց կյանքը գոհել հանուն հայրենիքի ազատության եւ անկախության, հանուն հայ ժողովրդի հարատեւման:

*-Ասացիք, որ երիտասարդները գնացին ծայրահեղ քայլի, դուրս եկան պաշտպանելու Հայ դատը, հայոց իրավունքը: Այսօր միջազգային ուժերը կարծես թե փորձում են հայոց իրավունքները ճանաչել: Ո՞րն էր Հայաստանի Ազատության Հայ ԳաղՏնի Բանակի (ՀԱՀԳԲ) ներդրումն այդ գործում:*

-ՀԱՀԳԲ-ի գործունեության գնահատականը ես չեմ, որ պետք է տամ: Դա պետք է անի Բանակն ինքը: Չոր հարցի առթիվ ես կարող եմ հայտնել ՀԺԸ տեսակետը: Ցավոք, համաշխարհային գերուժերը երբեք փոքր ժողովուրդների համար չեն մտածում եւ նրանց կատարած քայլերը երբեք չեն բխում փոքր ժողովուրդների շահերից: Այսօրվա դրությամբ կարծես թե պատմության անիվը նորից կրկնվում է, նորից սկսել է պտտվել նույն ուղղությամբ: Երեւույթը նույնն է՝ Հայոց ցեղասպանության դատապարտումը: Միայն ժամանակահատվածն է փոխվել: Մենք վերադար-

ձել ենք 1878 թվականի՝ Բեռլինի կոնգրեսի ժամանակները, երբ Խրիմյան Հայրիկն իր «թղթե շերտերով» փորձում էր եվրոպացիներին հարց լուծել: Իսկ այդ ընթացքում Եվրոպան իր հարցը լուծեց հայ ժողովրդի արյան եւ նրա հողային տարածքների հաշվին: Բեռլինի կոնգրեսից 20 տարի անց ակամատես եղանք Արեւմտյան Հայաստանում 300 հազար հայության ցեղասպանությանը՝ Աբդուլ Համիդի ձեռքով: Չեմ ասում, որ հիմա նորից կանգնած ենք այդ վտանգի դեմ հանդիման: Ոչ: Պայմանները հիմա փոխվել են: Բայց Եվրոպայի այսօրվա կատարած խաղերի արդյունքը մենք անպայման կվայելենք, կզգանք մեր մաշկի վրա: Այդ իսկ պատճառով ՀԺԸ-ն դեմ է Հայոց ցեղասպանության թերի եւ կիսատ-պռատ բանաձեւերին: Այդ նախագծերի կամ հայտարարությունների մեջ չեն նշվում, թե հայերը որտեղ են կոտորվել, որ նրանց հայրենիքը զավթվել է, ունեցվածքը՝ բռնագրավվել է այլն, եւ այլն: Այսինքն՝ ամենակարեւորը բաց են թողել: Ո՞վ չգիտե, որ Հայոց ցեղասպանություն է տեղի ունեցել՝ Ֆրանսիա՞ն, Գերմանիա՞ն, Անգլիա՞ն, Ռուսաստան՞ը:

*-Դուք կանխեցիք ցեղասպանության ճանաչման բանաձեւի թերություններին վերաբերող իմ հարցադրումը: Ի՞նչ վտանգներով է հղի այս կարգի ճանաչումը:*

-Դժվարանում եմ հիմա կանխագուշակել, թե ինչ վտանգ կարող է ներկայացնել այն Հայաստանի համար, բայց ապագան արդեն երեւում է. այս դատապարտումները կրկնակի ճնշում են Թուրքիայի

կառավարության եւ թուրք ժողովրդի վրա, որպեսզի իրենք եզր գտնեն Հայաստանի կառավարության հետ եւ սկսեն երկխոսություն, որի արդյունքում պետք է բացվի Հայաստանի սահմանային դուռը Թուրքիայի առաջ: Խնդիրն այն չէ, որ Թուրքիայի անորակ ապրանքը կողողի մեր հանրապետությունը. Հայաստանը շատ փոքր շուկա է Թուրքիայի համար: Հայաստանն առավել ռազմաքաղաքական նշանակություն ունի աշխարհի համար, ոչ թե տնտեսական: Այսօրվա դրությամբ, եթե փորձենք մենք մեզ գնահատել, հստակ կարելի է ասել, որ հայ ժողովուրդը պատրաստ չէ ոչ մի բանի: Ամենագլխավորը՝ Ազգային անվտանգության նախարարությունը մեզ մոտ չի աշխատում: 60-70 դրվաբով մարդիկ չեն կարող աշխատել: Եթե ազգային անվտանգությունը չի աշխատում, ի՞նչ սպասելիքներ կարող ենք ունենալ: Այլասերվում է ամեն ինչ: Համաշխարհային բանկը եւ Եվրամիությունն ու Ամերիկան արդեն ներդրումներ են անում Հայաստանում, որպեսզի այստեղի գործարանները չաշխատեն: Սա նշանակում է բարի դրացիական կամք մեր նկատմամբ:

*-Դիմակայելու ի՞նչ եղանակ, ի՞նչ մեթոդ կառաջարկեիք:*

-Այն, ինչ 15 դար առաջ ասել է Մովսես Խորենացին. 19-րդ դարում կրկնել է Խրիմյան Հայրիկը, քիչ ավելի ուշ՝ Եղիշե Չարենցը. միակ փրկությունը միասնական, հավաքական ուժն է: Ռուսները երբեք չեն պաշտպանի թույլ ՀԱՅԻՆ: Թույլը դատապարտված է մահվան:



Խնդիրն այն չէ,  
որ Թուրքիայի  
անորակ ապրանքը  
կողողի Հայաստան,  
Հայաստանը շատ  
փոքր շուկա է  
Թուրքիայի  
համար:  
Հայաստանն  
առավել  
ռազմաքաղաքական  
նշանակություն  
ունի աշխարհի  
համար,  
ոչ թե տնտեսական:

# ԿԱՐՑ ԼՈՒՐԵՐ

## Թանկ է ֆան առաջարկում ...

Հայաստանի էներգետիկայի նախարար Կարեն Գալուստյանն արդեն որերորդ անգամ հայտարարում է, որ Հայաստանին Իրանի առաջարկած գազի սակագինը 30-40 տոկոսով ավելի թանկ է, քան առաջարկում է Ռուսաստանը: «Անընդունելի է նման գներով գազ ստանալը», ասել է նախարարը, տեղեկացնելով, որ Իրանի հետ ներկայումս շարունակվում են գազի սակագինն իջեցնելու բանակցությունները: Պարզապես ապշեցնող է էներգետիկայի նախարարի դիտարկումը, թե Իրանը չի կարող դիտարկվել որպես գազի այլընտրանքային մատակարար:

Որտեղի՞ց ենք մենք գազ ստանում, ի՞նչ ճանապարհով է անցնում Ռուսաստան-Հայաստան գազախողովակաշարը, քանի՞ անգամ է պայթեցվել՝ գիտենք բոլորս: Բացի այդ, ի տարբերություն OPEC-ի (Նավթ արդյունահանող երկրների կազմակերպություն), որը կանոնակարգում է համաշխարհային շուկայում նավթի գները, գոյություն չունի «գազի OPEC», ասել է թե՛ գազի հաստատուն գին: Նման պայմաններում, երբ դեռևս կառուցված չէ Իրան-Հայաստան գազամուղը, գնի մասին խոսելն անհեթեթություն է: Պրն. Գալուստյանը, ժողովրդական ասացվածքի համաձայն, «ձուկը ջրում բազար է անում»:



## Մի քար չենք տա

Թուրքիայի պետնախարար Ուշենմեզը պատասխանելով լրագրողների հարցին Հայաստանի նախագահին կից մարդու իրավունքների հանձնաժողովի նախագահ՝ Պարույր Հայրիկյանի հայտարարության առնչությամբ, ասել է. «Հայերն ապրում են երազների աշխարհում: Մենք նրանց նույնիսկ մի քար չենք տա: Մեր նախնիները հանուն Կարսի, Արդահանի իրենց կյանքն են զոհաբերել: Թուրքիան այլ երկրից տարածքային պահանջներ չունի, եւ մենք անհրաժեշտ պատասխանը կտանք նրանց, ովքեր ընչաքաղց են մեր տարածքների նկատմամբ»: Հիշեցնենք, օրեր առաջ Պ. Հայրիկյանը ասել էր, թե պետք է վերանայել Լենին-Աթաթուրք համաձայնագիրը, Թուրքիայից պահանջել Կարսը, Արդահանը, Ադրբեջանից՝ Նախիջևանը:



## ԸՏՏ ԱՄԵՐԻԿՅԱՆ ՄԱՄՈՒԼԻ, ՌՈՒՍԱՍՏԱՆԸ ԻՐԱՆԻ ՌԱԶՄԱԿԱՆ ԴԱՇՆԱԿԻՑՆ Է ԿՈՎԿԱՍՈՒՄ

Մոսկվա ժամանած Մոհամմադ Խաթամին Իրանի առաջին նախագահն է, որը Ռուսաստան է այցելել 1979 թ. իսլամական հեղափոխությունից հետո: Իր հանդիպումը նախագահ Պուտինի հետ նա որպես աղյուսավետ եւ օգտակար է գնահատել: Իր հերթին Պուտինը ժխտել է, որ երկու երկրների միջև համագործակցությունը ուղղված է որեւէ երրորդ երկրի դեմ:

Անդրադառնալով Իրանի նախագահի այցին Ռուսաստան, Financial Times-ը մեջբերում է «Իմ թշնամու թշնամին իմ բարեկամն է» արաբական հայտնի ասացվածքը, նշելով, որ դա լավագույնս է բնութագրում Ռուսաստանի եւ Իրանի միջև արագ զարգացող հարաբերությունները: Անվտանգության բնագավառում երկու երկրների միջև համագործակցությունը դրսևորվում է նաեւ Ռուսաստանի կողմից Իրանին զենք վաճառելու բնագավառում: Իրանը Չինաստանից եւ Հնդկաստանից հետո ռուսական զենքի երրորդ գնորդն է: Ամերիկյան ազդեցիկ թերթը Իրան-Ռուսաստան հարաբերությունների ներքո անդրադարձել է նաեւ դարաբաղյան հակամարտության խնդրին: Թերթը մեջբերել է Ռուսաստանի ռազմական բնագավառում համագործակցության



պատասխանատու Իվաշովի խոսքերն այն մասին, որ երկու երկրները Կովկասում ռազմավարական դաշնակից են: «Կովկասում Իրանը Ռուսաստանի պես աջակցում էր Հայաստանին՝ Լեռնային Ղարաբաղի շուրջ Ադրբեջանի հետ իր հակամարտության մեջ: Իրանը գրեթե չի քննադատում ռուսական կամպանիան Չեչնիայում», - նշում է «Financial Times»-ը:

ԱՐՄԵՆՊՐԵՍ:



### Գյուճարիում կրացվի ՌԴ հյուպատոսարան

Այս տարվա ընթացքում Գյուճարիում բացվելու է Հայաստանում Ռուսաստանի դեսպանության գլխավոր հյուպատոսարանը: Հյուպատոսական բաժնի պետ Վլադիմիր Խրյուլովը նշելով, որ ներկայումս գործնական քայլեր են արվում հյուպատոսարանի շենքի ընտրության ուղղությամբ, միաժամանակ պարզաբանումներ տվեց

Ռուսաստան մեկնող Հայաստանի քաղաքացիների անձնագրային ռեժիմի եւ գրանցման մասին: ՀՀ քաղաքացիները, սասց նա, կարող են մեկնել Ռուսաստան հայաստանյան անձնագրերով՝ առանց հրավերի ձեւակերպման եւ ելքի թույլտվության կնիքի:



### Հայաստանի բնակչության երեք տոկոսը այլազգիներ են

Հայաստանում ներկա դրությամբ ապրում են քսանից ավելի այլազգություններ, մասնավորապես հույներ, ասորիներ, հրեաներ, եզդիներ, քրդեր, գերմանացիներ, լեհեր, ռուսներ, ուկրաինացիներ, որոնք միասին կազմում են ընդհանուր բնակչության երեք տոկոսը: Ամենամեծ ազգաբնակչան խումբը եզդիներն են՝ մոտ 60 հազար: Ասորիների թվակազմը 7 հազար է, որոնք հիմնավորված են Երեւանում /500 մարդ/, Արտաշատի, Կոտայքի, Արմավիրի մարզերում, հույներինը՝ 6 հազար. բնակվում են մայրաքաղաքում, Ալավերդիում, Ստեփանավանում, Վանաձորում եւ Հրազդանի ենթաշրջանում:

«Իվերիա» վրացական համայնքի տվյալներով, ՀՀ-ում գրանցված վրացիների թիվը 110-ն է, որոնց բնակության վայրը հիմնականում Երեւանն է, իսկ քսանն ապրում է Վանաձորում: Հրեական համայնքում գրանցված է մոտ 700 մարդ: Ըստ այդ համայնքում եղած տվյալների, վերջին երեք տարում տարեկան առնվազն 100 հրեա է հեռացել հանրապետությունից:

Հայաստանում առավել մեծ թվով ռուսներ՝ 70,3 հազար, գրանցվել են 1979-ի մարդահամարի տվյալներով, սակայն 80-ականներից սկսած եւ 1990թ. սկզբներին լայն ընդգրկում ստացած արտագաղթի պայմաններում, ռուս բնակչության թիվը հասել է մինչեւ 12-13 հազարի: Հնարավանների շտաբիղների /մոլոկաններ, որոնք իրենց կրոնական համոզմունքների համար 19-րդ դարում արտրվել են Անդրկովկաս/ թիվը կրճատվել է հինգ անգամ՝ կազմելով 5 հազար: Նրանց մեծ մասն ապրում է Երեւանում /մոտ 2000 մարդ/:

Ներկայումս հանրապետությունում բացակայում են գերմանացիների համահավաք բնակավայրեր, սակայն 1998-ին գերմանական համայնքի անդամները թվով 430 էին՝ 97 ընտանիք: Ինչ վերաբերում է ուկրաինացիներին, ապա վերջին մարդահամարի տվյալներով, նշվել է Հայաստանում բնակվող մոտ 8 հազար մարդ, որից 3 հազարը՝ Երեւանում:

Նշենք, որ Հայաստանում բնակվող այլազգիների համար գործող կրոնական օջախներից են 1991թ. օգոստոսից՝ Քանաքեռի ուղղափառ Սուրբ Աստվածամայր եկեղեցին, իսկ 1996-ից՝ Երեւանում վերաբացված հրեական սինագոգը:

Արմենյաբեւ  
✓

### Վ. Սաադաթ.

### «Հայաստանի բնակչության կեսը չքավոր է, որի միակ պատճառը գործազրկությունն է»

Համաշխարհային բանկի «Փոքր դրամաշնորհներ-2000» ծրագրի ֆինանսական օժանդակությամբ եւ Ազգաբնակչան հետազոտությունների հայկական «Հազարաշեն» կենտրոնի ջանքերով լույս է տեսել «Պատմություններ աղքատության մասին» գիրքը: Նրանում ներկայացված են Հայաստանի տարբեր մարզերում յոթնամյա գիտարշավների ընթացքում ազգաբնակչան-հեղինակների գրանցած հարցազրույցները, որոնց միջոցով «ընթերցողը հնարավորություն է ստանում մուտք գործել աղքատության աշխարհ»:

Գրքի ներկայացման ժամանակ ՀԲ Երեւանի գրասենյակի արտակարգ եւ լիազոր ներայացուցիչ Վեյա Սաադաթն սասց, որ Հայաստանի բնակչության կեսին կարելի է համարել չքավոր, որը, սակայն, չի կարելի համեմատել աֆրիկյան երկրների չքավորության հետ: Այդ տարբերությունը նա բացատրեց «մարդկային կապիտալի բարձր եւ առողջ լինելով»: Միակ խնդիրը, ըստ նրա, գործազրկությունն է. աշխատատեղերի բացմամբ կկրճատվի աղքատությունը մեր հանրապետությունում: Բանկի ներկայացուցիչը հայտնեց նաեւ, որ գալիք վեց ամիսների ընթացքում իրենք պատրաստվում են իրականացնել աղքատության մակարդակի, ինչպես նաեւ ոչ պաշտոնական հատվածի օգնության ուսումնասիրություն: Խոսքը հիմնականում սփյուռքահայ հայրենակիցների օգնության մասին է, որը, բանկի հաշվարկներով, տարեկան կազմում է մոտ 200 մլն դոլար:



### Հիմնականում Ռուսաստան են գնում

Հայաստանից տարեկան արտագաղթում է 50 հազար մարդ, ընդ որում՝ արտագաղթողների 85 տոկոսը մեկնում է ԱՊՀ երկրներ, հիմնականում՝ Ռուսաստան /Մոսկվա, Մոսկվայի մարզ, Ռոստով, Կրասնոդարի երկրամաս եւ Հյուսիսային Կովկաս/:



# Մա «Մեդրիի տարբերակը» չէ՞

Անգլիական հեղինակավոր (The Economist) ամսագիրը ապրիլի 21-ին հրապարակել է «Ղարաբաղյան խաչմերուկ» հոդվածը, որում, մասնավորապես, նշվում է, որ ղարաբաղյան ապագա կարգավորման ուրվագրծերը արդեն հայտնի են. «Հայերը վերադարձնում են ադրբեջանցիներին իրենց գրաված 7 շրջաններից 6-ը: Լեռնային Ղարաբաղը եւ նրան կից Լաչինի շրջանը, որը կապում է Ղարաբաղը Հայաստանի հետ, ստանում են ինքնակառավարման կարգավիճակ: Որպես փոխհատուցում, Ադրբեջանը կստանա միջազգայնորեն վերահսկվող ճանապարհ, որը կապում է Ադրբեջանը Նախիջեւանի հետ», - գրում է ամսագիրը:

Նշենք, որ «ինքնակառավարման կարգավիճակը» պետական անկախություն չէ, իսկ «միջազգայնորեն վերահսկվող ճանապարհը» անցնում է Հայաստանի Մեդրիի շրջանի տարածքով:



### Էլի մեկ աղանդ

Հայաստանի Վանաձոր քաղաքում քրիստոնեական աղանդների շարքում գործում է նաև մահմեդական աղանդ: Կրոնական այդ ուղղությունը կոչվում է «Բահայիներ»:

Ըստ լուրերի Վանաձորում ապրում են այս աղանդի մոտ երկու տասնյակ հետևորդներ: Նրանք հիմնականում Ադրբեջանից Հայաստան ներգաղթած հայեր են:



## Ալիեյը դարձյալ սպառնում է



Հեյդար Ալիև Արկաղի Ղուկասյան Ռոբերտ Քոչարյան

Ադրբեջանի նախագահ Հեյդար Ալիեյը հայտարարել է, թե Ադրբեջանը պատրաստ է ռազմական ճանապարհով ազատագրել Հայաստանի կողմից բռնազավթված տարածքները: «Փրայմ նյուզը» տեղեկացնում է, որ Նովրուզի տոնի կապակցությամբ դիմելով ադրբեջանցիներին՝ Ալիեյը նշել է, որ առայժմ հուսով է, որ հայ-ադրբեջանական հակամարտությունը կկարգավորվի խաղաղ ճանապարհով:

«Եթե դա տեղի չունենա, ապա ադրբեջանական ժողովուրդը ցույց կտա իր ուժը եւ գրավյալ տարածքները կազատագրի ռազմական ճանապարհով», - ասել է Ալիեյը: Իսկ նրան ԼՂՀ նախագահ Արկաղի Ղուկասյանը խորհուրդ չի տալիս վերսկսել պատերազմական գործողությունները: Նա ասել է, որ մեկ անգամ արդեն Ադրբեջանը «վառվել» է, եւ հույս է հայտնել, որ այդ երկիրը չի կրկնի նախկինում գործած սխալները: Միաժամանակ Ղուկասյանը շեշտել է, որ ԼՂՀ-ն ուժեղ բանակ ունի եւ պատրաստ է ցանկացած դիմակայության:



### Միակ հնարավորությունը

«Եթե ղարաբաղցիները ցանկանում են ապրել ինքնուրույն, եթե ազգը չի ուզում կորցնել հողը, ապա պատերազմը անխուսափելի է. այն շրջանցելու միակ հնարավորությունը ուժեղ լինելն է», - հայտարարել է ԼՂՀ ազգային ժողովրդավարական կուսակցության ղեկավար Մուրադ Պետրոսյանը:

«Որպեսզի մարեն Ադրբեջանի ուրախ տրամադրությունները, որպեսզի միջազգային հանրությունը Ղարաբաղյան գերխնդրին բացառիկ մոտեցում ցուցաբերի, մենք ինքներս պիտի դառնանք բացառիկ», - նշել է նա:



## Նախաձեռնություն

Թուրքիայում ԱՄՆ-ի դեսպան Ռոբերտ Փիրսը հայտարարել է, որ Թուրքիայի կառավարական եւ մասնավոր կազմակերպությունները սկսել են նախաձեռնել պատմափաստագրական բազայի ստեղծմանը ուղղված ջանքեր՝ «1915-19 անհանգիստ տարիների մասին հայերի եւ թուրքերի հարցերին թափանցիկ եւ օբյեկտիվ մթնոլորտում պատասխանելու համար»:

Ինչպես հաղորդում է Մեդիամաքսը, հանդես գալով թուրք-ամերիկյան գիտաժողովում, Փիրսը ասել է, որ ԱՄՆ-ը խրախուսում է «թուրքերի եւ հայերի միջեւ ավելի սերտ կապերի հաստատմանը ուղղված այս ջանքերը»:



### Ապրիլի 24-ը Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի օր Մերիլենդի նահանգում

ԱՄՆ Մերիլենդ նահանգի Սենատը մարտի 26-ին երեկոյան ձայների 34 կողմ, 10 դեմ հարաբերությամբ հաստատել է մի բանաձև, ըստ որի, Ապրիլի 24-ը նահանգում պետք է նշվի որպես Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի օր: Ըստ «Ասոշիեյթեդ պրեսի», այժմ նույն առաջարկը պետք է քննարկվի նահանգի ստորին պալատում: Նախօրեին ԱՄՆ պետքարտուղար Քոլին Փաուելը զգուշացրել էր Մերիլենդի օրենսդիրներին, որ բանաձևի ընդունումը կվտանգի թուրք-հայկական հարաբերությունների բարելավման գործընթացը: Քննարկումից առաջ Մերիլենդի մայրաքաղաք Աննապոլիս էր ժամանել ԱՄՆ-ում Թուրքիայի դեսպան Բաքի Իլքինը: Քննարկման ընթացքում բանաձևի նախնական տարբերակը, ուր նշվում էր, թե Թուրքիան շարունակում է ժխտել ցեղասպանության փաստը, վերախմբագրվել է, եւ Թուրքիայի մասին բոլոր հիշատակումները վերջնական տարբերակից հանվել են: ✓

### Փաուելը շարժվում է Բիլնթոնի հետքերով

ԱՄՆ պետքարտուղար Քոլին Փաուելը նախագգուշական ամակ է ուղարկել Մերիլենդ նահանգի սենատի պատգամավոր, դեմոկրատ Դան Մորհաիմին, որը պատրաստվում է Հայոց ցեղասպանության ընդունման օրինագիծ ներկայացնել Մերիլենդի սենատ:

Հայտնելով, որ ԱՄՆ-ի մամնօրինակ քայլերն աննպաստ հետևանքներ են ունենում կառավարության արտաքին քաղաքականության իրականացման վրա, Փաուելը դրանք ընդհանրապես անօգտակար է համարել: Ըստ նրա, այդ հարցերը տեղական խորհրդարանների գործը չեն:

Վաշինգտոնի քաղաքական մեկնաբանների կարծիքով, ԱՄՆ նոր կառավարությունն այս քայլով ապացուցում է, որ մտադիր է շարունակել դեռ Բիլնթոնի ժամանակներից սկիզբ առած աջակցությունը Թուրքիայի Հայոց ցեղասպանության ընդունման հարցում: ✓



### Հնդկաստանի պետական կառույցները զբաղվում են հայկական ցեղասպանության հարցերով

Հնդկաստանում կան պետական կառույցներ, քաղաքական խորհուրդներ, որոնք զբաղված են Հայոց ցեղասպանության ճանաչման հարցով, -ասաց Հայաստանում Հնդկաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Բալ Անանդը: Մեծ եղեռնը նա անվանեց հայ ժողովրդի պատմության ողբերգական էջերից մեկը:

Ըստ հնդիկ դեսպանի, երկուստեք՝ թե՛ Հայաստանը, թե՛ Թուրքիան, պետք է ուժ գտնեն դառը անցյալը հետետում թողնելու համար: ✓

### Ցեղասպանության վերաբերյալ բանաձևեր Գերմանիայում եւ Կանադայում

Ապրիլի 6-ին թուրքական «Անատոլու» գործակալությունը տարածել է հաղորդագրություն, ըստ որի մայիսին ԳԴՀ խորհրդարանը մտադիր է քննարկել Հայոց ցեղասպանության մասին բանաձևեր: Ինչպես հաղորդում է գործակալությունը, «չնայած ԳԴՀ սոցիալիստական դեմոկրատական կուսակցության եւ ԲԴՄ /ԲՍՄ (Բրիտոնեա-դեմոկրատական եւ Բրիտոնեա-սոցիալիստական կուսակցություններ) դաշինքի մշտական կոչերին, խորհրդարանական հանձնաժողովը քննության է առել ԳԴՀ Հայկական ընկերակցությունների դիմումը եւ գաղտնի քվեարկությամբ որոշում ընդունել Ցեղասպանության մասին բանաձևեր հանձնել Դաշնային խորհրդարանի քննարկմանը»:

Ըստ լուրերի Կանադայի Սենատի մարտի 29-ի նիստում ներկայացվել է Հայոց ցեղասպանության ճանաչման բանաձևեր, որով Կանադայի կառավարությանը կոչ է արվում ճանաչել Հայոց ցեղասպանությունը, դատապարտել դրա հերքման փորձերը, եւ ապրիլի 24-ը հայտարարել 20-րդ դարի առաջին ցեղասպանության՝ 1,5 մլն. հայ զոհերի հիշատակի օր: Օրինագիծը ներկայացրել է Քվեբեկ նահանգի Սենատ Լորան քաղաքից սենատոր Շերիլ Մաուին: Բանաձևեր պաշտպանել է սենատոր Ռեյնոլդ Մետլավիկին, որը հայկական ծագում ունի: Երեք սենատորներ ցանկացել են արտահայտվել վերոհիշյալ հարցի առնչությամբ, սակայն նիստի ժամանակը սպառվել է, եւ այդ պատճառով էլ քննարկումը հետաձգվել է մինչեւ Սենատի հաջորդ նիստը: ✓

## Լեռնային Ղարաբաղում սկսվեցին ռազմական ուսումնական վարժանքներ

Ապրիլի 10-15-ը Լեռնային Ղարաբաղում տեղի կունենան ԼՂՀ պաշտպանության բանակի հրամանատարա-շտաբային ուսումնական վարժանքներ՝ մարտական հրաձրությամբ եւ զորահավաքային ներուժի ներգրավմամբ:

Վարժանքին մասնակցության հրավեր է ստացել նաեւ Հայաստանի զինված ուժերի գլխավոր շտաբի պետ, գեներալ-լեյտենանտ Միքայել Հարությունյանը, որին ապրիլի 9-ին ընդունեց ԼՂՀ նախագահ Արկաղի Ղուկասյանը: Հանդիպման ընթացքում, որին մասնակցել է Լեռնային Ղարաբաղի պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը, քննարկվել են ռազմական շինարարության հետ կապված հարցեր:

ԼՂՀ նախագահի մամլո ծառայության հաղորդագրության համաձայն, գեներալ Հարությունյանը բարձր է գնահատել ղարաբաղյան բանակի մարտական պատրաստությունը:



## Ֆինանսական օգնություն

Ըստ տեղեկության, Սպիտակ տունը Ամերիկայի Միացյալ Նահանգների /ԱՄՆ/ Կոնգրեսի արտաքին հատկացումների կոմիտե է ներկայացրել Հարավային Կովկասի երկրներին 2002թ. ԱՄՆ ֆինանսական օգնության ծրագրի նախագիծը: Նախագծով առաջարկվում է 22 տոկոսով կրճատել Հայաստանին տրվող ֆինանսական օգնությունը եւ 46 տոկոսով մեծացել Ադրբեյջանինը:

## Հայ եւ թուրք կանայք հուշագիր են ստորագրել

ԵՐԵՎԱՆ, 3 ԱՊՐԻԼԻ. ԱՐՄԵՆՊՐԵՍ:

*Մարտի 28-ին՝ թուրք կանանց հրավերով Թուրքիայում էր Հայաստանի կանանց պատվիրակությունը մասնակցելու համար «Կանայք եւ խաղաղությունը» ֆորումին: Պատվիրակության կազմում էին Հայաստանից Հայաստանի Ազգային Ժողովի պատգամավորուհի Հերմինե Նադդայանը եւ «Կանանց Երկխոսություն» հասարակական կազմակերպության նախագահ Հրանուշ Խառատյանը: Արտաքին ԳՆ հասարակայնության հետ հարաբերությունների վարչությունից հայտնեցին, որ քննարկումների վերջում հայ եւ թուրք կանանց միջև ստորագրվել է կողքում ներկայացվող փոխըմբռնման հուշագիրը:*

### Փոխըմբռնման հուշագիր

Մենք հայաստանցի եւ թուրք պատգամավորուհիներս (երկուական հոգի յուրաքանչյուր երկրից) "WINPEACE"-ի նախաձեռնությամբ հանդիպեցինք Ստամբուլում: Մենք թեւ փոքրաթիվ խումբ ենք, սակայն ազգային դիմազրծով եւ քաղաքական հայացքներով տարբերվում ենք միմյանցից: Այդուհանդերձ, մենք որոշակի ձեռքբերումներ ունեցանք, որոնց իրագործումն առավել դյուրին է կանանց համար: Մենք ունկնդրեցինք միմյանց, ձգտեցինք հասկանալ փոխադարձ մտահոգությունները, խոսեցինք մեր սեփական խնդիրների մասին եւ կարողացանք անկեղծ գրուցել: Այս կերպ բացահայտեցինք, որ մենք ունենք թե՛ ընդհանրություններ, եւ թե՛ տարբերություններ՝ մշակույթի եւ հետաքրքրությունների առումով: Մենք ունենք ընդհանուր խնդիրներ եւ ընդհանուր շահագրգռվածություն: Ամենակարեւորը՝ համաձայնեցինք, որ այսպես կոչված լուծումների փոխարեն, ուր կողմերից մեկը պարտըվող է, իսկ մյուսը՝ հաղթող, հնարավոր են, եւ պետք է գտնվեն ճիշտ ու արդար լուծումներ՝ հոգուտ երկու կողմերի: Մենք կարծում ենք, որ մեր երկրների

համար ամենակարեւորը՝ խնդիրները երկխոսության միջոցով լուծելն է՝ ահաբեկչության եւ ռազմական լուծման փոխարեն: Խաղաղ լուծման մեթոդը մեզ ոչ միայն կազատի վախի եւ թշնամանքի զգացումից, այլեւ կտա վիթխարի գույնարներ, որոնք կարող են օգտագործվել մեր երկրների զարգացման եւ մեր ժողովուրդների ու նախեւառաջ մեր կանանց խնդիրների լուծման համար:

Որպես կին եւ որպես խորհրդարանականներ, մենք որոշել ենք նպաստել մեր ժողովուրդների միջև ծավալված մերձեցմանը: Որպես առաջին քայլ աշխատելու ենք նեցուկ կանգնել բոլոր մակարդակներում մեր քաղաքական կուսակցությունների եւ խորհրդարանականների միջև երկխոսությանը՝ սկսելով կին քաղաքական գործիչներից: Մենք կոչ ենք անում մեր կառավարություններին՝ սկսել քաղաքական երկխոսություն:

Մենք կոչ ենք անում քաղաքական կուսակցություններին, խորհրդարանականներին, կանանց եւ ՁԼՄ-ներին (*Չանգվածային լրատվական միջոցներին*) գորեղացնել ջանքերը՝ հոգուտ մեր ժողովուրդների միջև բարեկամության եւ խաղաղության:

### Թուրքմենիայում բնակվում է 30 հազար հայ

Թուրքմենիայում բնակվում են շուրջ 30 հազար հայեր, որոնք հաստատվել են հիմնականում Աշխաբադում:

«Հայ համայնքը թուրքմեն հասարակության անբաժան ու կարևորագույն մասն է: Հայերը շատ լայն մշակութային իրավունքներ ունեն Թուրքմենիայում», - ասաց Հայաստանում Թուրքմենիայի արտակարգ և լիազոր դեսպան Թոյլի Կուրբանովը: Նա նշեց, որ Հայաստանից տարվա ընթացքում բազմաթիվ երաժշտական ու թատերական խմբեր, ճանաչված երգիչներ են մեկնում Թուրքմենիա, բացի այդ, Աշխաբադում կան բազմաթիվ հայկական մշակութային օջախներ:

### ԴԵՌ ՀՈՒՅՍ ՈՒՆԵՆ

*Այլադես իրենի խնդիրը կլուծեն  
բաղաբազան ճանադարհով*

**1**999 թվականում Հայաստանի Ազգային Ժողովում Տեղի ունեցած ռճագործության մեղադրյալների դատավարության /Հոկտեմբերի 27-ի/ գործի վերաբերյալ նահասակ Վազգեն Սարգսյանի եղբայր, նախկին վարչադես՝ Արամ Սարգսյանը նշել է, թե իրենք դեռ հույս ունեն, որ դատավարությամբ գործը կբացահայտվի, ու խնդիրը կլուծվի, այլապես իրենք հարցը կլուծեն քաղաքական ճանապարհով: Հարցի լուծման քաղաքական ճանապարհը, նորաստեղծ «Հանրապետություն» կուսակցության մի այլ դասասխանասու՝ Երեանի նախկին ֆադադես Ալ. Բազեյանը հետեյալ կերպով պարզաբանեց.



*Արամ Սարգսյան*



*Արթուր Բազեյան*

«Եթե դատավարությամբ գործը չբացահայտվի, ապա մենք կարող ենք ենթադրել, որ քաղաքացիները հնարավոր է երկրում քաղաքական իրավիճակի փոփոխման դեպքում: Այս իշխանությունների օրոք տեղի է ունեցել ծանր ռճագործություն պետության դեմ, ու հոկտեմբերի 27-ի գործի չբացահայտման պարագային կենթադրենք, որ այս իշխանությունները չեն կարողանում ապահովել ոչ միայն պետական մարմինների, այլև ողջ ժողովրդի անվտանգությունը»:

Այնպես որ, քաղաքական իրավիճակի փոփոխման իրավունք, ըստ Արամ Սարգսյանի, «Հանրապետություն» իրեն կվերապահի: Առայժմ «Հանրապետություն» կուսակցությունը հիմնադիր համագումարից առաջ վերջնական տեսքի է բերում իր քաղաքական ծրագիրն ու հաշվառում իր նախնական անդամներին:

## Մամուլի Հայտարարություն

**2001** թ. Մարտի 31-ին երեկոյան, Հունաստանի մայրաքաղաք Աթենքում կայացավ «Հայաստան» Հասարակական Մշակութային Կենտրոնի պաշտոնական բացումը: Կենտրոնը հիմնադրվել է Հունաստանի համալսարաններում սովորող Հայաստանցի ուսանողների նախաձեռնությամբ և նրանց տեսլականները կիսող և աշխատանքի ու նվիրումի պատրաստակամությունը համակրող հայորդիների մի սովոր խմբի կողմից, որ հանգամանքների բերումով, վերջին տարիներին հաստատվել է Հունաստանում:

Կենտրոնի ստեղծման անհրաժեշտությունը պայմանավորված է հասարակական, մշակութային, կրթական, առողջապահական, տեղեկատվական այլազան բնույթի կարիքների և խնդիրների դիմագրավման և նրանց արժանապատիվ լուծումներ առաջադրելու հրամայականով:

Սույն նախաձեռնությունն ի սկզբանե իր անմնացորդ նեցուկն ու հոգեկան, բարոյական և գործնական աջակցությունը ունեցավ մայր աթոռ Սուրբ Էջմիածնի հայրապետական պատվիրակ և հունահայոց առաջնորդ Ռսկան Արքեպիսկոպոս Գալվակյանի կողմից:

Կենտրոնի բացման հանդիսությանը իրենց ներկայությամբ պատվեցին ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան պարոն Արմեն Պետրոսյանը, հունահայոց առաջնորդ Ռսկան Արքեպիսկոպոս Գալվակյանը, Հայ Կաթողիկե համայնքի վիճակավոր հայր Անտոն Արամյանը, Հայ Ավետարանական Համայնքի Հովիվ Վիգեն Չոլաքյանը, արժանապատիվ Տեր Հակոբ Քահանա Ռոստոմյանը, հայկական քաղաքական-հասարակական կազմակերպություններից՝ Հայկական Ժողովրդային Ծարժման, Հունահայոց Թեմական Խորհրդի, Արարատ Մարզամշակութային Միության, Հունաստանի Հայ Երիտասարդական Միության ներկայացուցիչները, և սովոր բազմություն որոնք խոտմերամ հավաքված էին նորաբաց կենտրոնի շքեղ սրահում:

«Հայաստան» Հասարակական Մշակութային Կենտրոնը արդեն իսկ աշխույժ թափով սկսել է իր գործունեությունը: Ապրիլ-մայիս ամիսների համար ծրագրավորված է չորս դասախոսական ձեռնարկներ, իսկ Աթենքի ամենամեծ դահլիճում՝ Հայաստանից հատուկ հրավիրված երգիչների մասնակցությամբ տեղի կունենա և Կենտրոնի հիմնադրմանը նվիրված մեծ երգահանդես:

6.04.2001թ.

*«Հայաստան»  
Հասարակական Մշակութային Կենտրոն*

*հասցե. OULIE 12, ATHENS 11745, GREECE  
հեռախոս 9359982 - 9359882*

# Մեղրին կորցնելու դեպքում ստրկության ենթ տրվում թուրքական աշխարհին

**Վ**երջին սարհներին Ղարաբաղյան հիմնահարցը կարգավորելու մտադրությամբ, հաճախ է խոսվել հողասարածմների փոխանակման մասին, այս թեմայի հիմնական ռազմավարներից (*եթե ոչ գլխավորը*) կարելի է համարել Ամերիկայի արտաքին գործոց նախարարության նախկին դաստնյա, «Ուլ Գորել»-ը: Բոլորիս հիշողության մեջ թարմ է նրա հայտնի նախագիծը հողասարածմների փոխանակման հարցում, ըստ որի Յայասանը ղարաբաղին միացնող Լաչինի միջանցքի փոխարեն լիարժեք Ջանգեզուրը հանձնել Ադրբեջանին:

Այս նախագիծով ոչ միայն Յայասանը գրկվելով իր հարավային մեծ հարեւանի՝ Իրանի հետ ունեցած կարելուր ու աղախով սահմանից դրվում է թուրքերի անուր օղակի մեջ, այլ նաև աղախովվում է Թուրքիայի մուսուլման Կովկաս եւ Միջին Ասիա:

Պանթուրիստների համար Ջանգեզուրի սիրանալը միշտ երազան է եղել, քանի որ այդպիսով Ադրբեջանի հանարդեսությունը, միանալու էր Նախիջեւանի ինքնավար մարզին, իսկ վերջինիս 11 կիլոմետրանոց սահմանի շրջափակումը հնարավորություն կունենան գրկախառնվելու իրենց մեծ եղբոր՝ Թուրքիայի հետ:

Այս ծրագիրը իրականացնելու համար պանթուրիստները գործի էին անցել դեռ խորհրդային ժամանակաշրջանից. այսպես կոչված համայնավար գաղափարախոսների, դրանց շարժումը Ադրբեջանի հանարդեսության այսօրվա նախագահ Յեյդար Ալիեւի շնորհիվ:

Ահա այս մասին է դասմունք խորհրդային սարհներին, Յայասանի Կոմունիստ կուսակցության Կենտրոնական Կոմիտեի առաջին դեմեթից, Ալեքսանդր Կիրակոսյանը:



Միջոցառական սահմաններ



Գորելի առաջարկած դիվանը

Բարբու: Ասաց՝ ինձ մնան ճանապարհի կառուցման մասին տեղեկություններ հայտնի չեն: Ասացի՝ տարօրինակ է, որ գլխավոր շտաբի պետը տեղյակ չէ, երբ ճանապարհը կառուցվում է»:

Խնդրին մոտիկից ծանոթանալու նպատակով Մոսկվայից 16 հոգանոց փորձագետների պատվիրակություն է ժամանում Հայաստան: Հանձնաժողովը ուսումնասիրում է ճանապարհը եւ տալիս խիստ բացասական գնահատական՝ կառուցել չի կարելի: Ադրբեջանի կենտրոնի առաջին քարտուղար Հեյդար Ալիեւը երկրորդ անգամ է համոզում Լ. Բրեժնեւին: Հայաստան է ժամանում փորձագետների նոր պատվիրակություն եւ ճանապարհի կառուցման համար տալիս դրական եզրակացություն: Ալեքսան Կիրակոսյանի պատմելով, Բրեժնեւը զանգել էր պաշտպանության նախարար Ռուստինովին, ապա Ազարկովին եւ ասել. «Ինչո՞ւ եք նեղացնում Ալիեւին»:

«Հայաստան եկավ Ադրբեջանի Մինիստրների խորհրդի նախագահի տեղակալ Մեյիդովը, միասին գնացին Մեղրի: «Վիլիսի» վարորդին կարգադրեցի քշել ուղիղ Արաքսի ափով, քարերի վրայով: Մեյիդովին, որը հայերեն շատ լավ գիտեր, ասացի՝ սա է ճանապարհը, որ ուզում եք կառուցել:



«**Ձ**րովի հողատարածքներն ավելացնելու եւ ք ե ռ թ ի ո թ յ ու ը քարծրացնելու վերաբերյալ մեր պահանջով ԽՍՀՄ կենտկոմը եւ Մինիստրների խորհուրդը 1977 թ. հոկտեմբերին որոշում էին ընդունում: Մենք ունեինք հազարավոր հեկտար հողատարածքներ Հոկտեմբերյանի շրջանում, որոնք գրտնվում էին պաշտպանության նախարարության հսկողության տակ: Ես գնացի Մոսկվա, գլխավոր շտաբի պետ, մարշալ Ազարկովի մոտ եւ առաջարկեցի այդ տարածքները ազատել, որպեսզի մենք կարողանանք այդ հողերը մշակել: Նա շատ վատ ընդունեց լուրը եւ սկսեց բարկանալ. ինչպե՞ս կարելի է Անդրկովկասի զինվորական օկրուգի ամենամեծ կրակադաշտերից մեկը վերացնել: Բացատրեցի՝ հողատարածքներ չունենք, ջրովիմ քիչ է: Ազարկովը կտրականապես

մերժեց: Ասացի՝ կրակադաշտի համար կարող ենք տեղ հատկացնել Թալինի շրջանում, 50 տոկոս ծախսերն էլ Հայաստանը կհոգա: Մերժեց: Ես այդ ժամանակ ասացի, որ դուք չեք ուզում մի փոքր ծախս կատարել եւ Հայաստանին օգնել այն պարագայում, երբ ԽՍՀՄ-ի միջոցներով ճանապարհ եք կառուցում ՆԱՏՕ-ի համար: Ազարկովը զարմացած ինձ նայեց, բարձրացավ տեղից եւ առաջարկեց անցնել կողքի սենյակ: Մարշալը բացեց մեծ քարտեզը, ասաց՝ խնդրում եմ ցույց տվեք՝ ինչի՞ մասին է խոսքը: Բացատրեցի, որ Ադրբեջանցիները Ջանգեզուրում ճանապարհ են կառուցում, ուզում են Նյուվադիով, ապա Մեղրիով կապվել Օրդուբադին: Ասացի, որ այդ ճանապարհով Ադրբեջանը Նախիջեւանով միանում է Թուրքիային, եւ ՆԱՏՕ-ի զորքերը ցանկացած պահի այդ ճանապարհով կարող են հասնել

Մի փոքր գնալուց հետո Մեյիդովը գունափոխվեց, խնդրեց կանգնեցնել մեքենան: Արդեն գետն էինք ընկնում: Ասացի՜ սա է ճանապարհը, ուրիշ ճանապարհ չկա:

Հետագայում բազմիցս փորձեր արվեցին, բայց՝ անհաջող: Ադրբեջանցիներն էլ ճանապարհը չկարողացան կառուցել», հիշում է Ալեքսան Կիրակոսյանը:

Վերջին տարիներին շատ է խոսվում Մեդրին Լաչինով փոխանակելու մասին: Անշուշտ, այդ խոսակցությունները օդից չեն վերցված: Այլ բան, որ դրանք երբեմն չափազանցվում են, օգտագործվում ներքաղաքական նպատակներով: Մեդրին Լաչինով փոխանակելը, որն ընդունված է անվանել «Գորլի ծրագիր», քննարկվել է մեկ տարի առաջ նախագահ Քոչարյանի մակարդակով (նախագահն ինքն է ասել), քննարկվել է նաև Լեւոն Տեր-Պետրոսյանի, ինչպես կոնուցիստական Հայաստանի 70 տարիներին: «Գորլի ծրագիրը» պանթուրքական երազանքների մի մասն է, շատ կարեւոր մասը: Մեդրին շատ թանկ է, անգին: Այն կորցնելու դեպքում մենք ստրկության ենք տրվում քուրքական աշխարհին:

Պրն. Կիրակոսյանի հետ երկար գրուցեցինք: Նա պատմեց, որ Մեդրիի փոխանակման հարցը միշտ էլ քննարկվել է: 70 տարիներին Մեդրիի դիմաց ադրբեջանցիները համաձայն են եղել մի քանի անգամ մեծ տարածքներ տրամադրել մեզ, նույնիսկ՝ Նախիջեւանի կեսը: Սակայն Հայաստանի եւ ոչ մի կոնուցիստ ղեկավար մման «գոհողության» չի գնացել: «Դու գիտե՞ս, որ Մեդրիի տարածքով անցնող երկաթուղին, Մեդրիի կայարանը վերահսկվում էին Ադրբեջանի երկաթուղու վարչության կողմից: Երեւան-Բաքու երկաթուղուց՝ Մինչեւանից մի ճյուղ էր հասնում Ղափան: Այդ ամբողջ հատվածը, ինչպես նաև Ղափանի կայարանը վերահսկվում էր Ադրբեջանի կողմից», ասում է Ալեքսան Կիրակոսյանը:

Անկեղծ ասած, չգիտեի: Կարծում եմ՝ մեր ընթերցողներից շատերը եւս տեղյակ չեն: Հարցնում եմ. ԽՍՀՄ ժամանակներում հնարավոր էր Մեդրին բռնի կերպով, ինչպես ԼՂ-ն եւ Նախիջեւանը, հանձնել Ադրբե-

### 70 տարիներին Մեդրիի դիմաց ադրբեջանցիները համաձայն են եղել մի քանի անգամ մեծ տարածքներ տրամադրել մեզ, նույնիսկ՝ Նախիջեւանի կեսը:

ջանին»: «Իհարկե, հնարավոր էր: Բայց ԽՍՀՄ ղեկավարությունը միայն նրա համար չէր, որ Թուրքիայի շահերին նպաստող քայլեր կատարեր: ԽՍՀՄ-ն ուներ ի՛ր ազգային շահերը», ասում է պրն. Կիրակոսյանը եւ ավելացնում. «Մեդրին ռազմավարական վիթխարի նշանակություն ունի: Մեդրիում շոշափվում են Իրանի, Ռուսաստանի կենսական շահերը: Մենք Ռուսաստանի հետ ռազմավարական դաշնակիցներ ենք, Ռուսաստանը Իրանի հետ ռազմավարական դաշնակից է: Անհնար է Մեդրին հանձնել: Դա կնշանակի, որ մենք Իրանի հետ հարաբերություններ չենք ունենա:

Այս օրերին շատ է խոսվում Հարավային Կովկասում հաղորդակցությունների վերաբացման մասին, ինչպես՝ Երեւան-Նախիջեւան-Մեդրի-Բաքու, Կարս-Գյումրի երկաթգծերի: Ալեքսան Կիրակոսյանը կարծում է. «Երկաթգծերը, ճանապարհները կարելի է բացել, բայց մեկ պայմանով. ճանապարհների, երկաթգծերի այն հատվածները, որոնք անցնում են Հայաստանի տարածքով, պետք է վերահսկվեն Հայաստանի կողմից: Ասացի, որ այն ժամանակ երկաթուղու Մեդրիի հատվածը, Մեդրիի կայարանը վերահսկվում էր Ադրբեջանի կողմից: Այդպես չի կարելի, ինչպես աշխարհում է ընդունված, մեր տարածքով անցնող երկաթգծի, կայարանների տերը Հայաստանն է. Ադրբեջանի տարածքում՝ Ադրբեջանը: Բայց ինձ թվում է, տարանցիկ ճանապարհների հարցը կարելի է լուծել ԼՂ հարցի հետ, համալիր ձեռով: Մեդրիի երկաթուղին կարելի է բացել պայմանով, որ Թուրքիան բացանի Մարգարայի եւ Ախուրյանի սահմանային դռները, եւ այդ ամենը պետք է ամրագրվի պետական պայմանագրերով»:

Ալեքսան Կիրակոսյանի կարծի-

քով՝ երկաթուղու բացումը կօգնի Մեդրիի տարածաշրջանի զարգացմանը: Նա հիշում է, որ խորհրդային ժամանակներում Մեդրին զարգացնելու մասին երկու օրենք էր ընդունվել, բնակիչներին տրվում էին արտոնյալ պայմաններ, գյուղացիների բերքը պետությունը գնում էր բարձր՝ «մոնոպոլ» գներով: Մեդրիի նկատմամբ «հոգատար» էր նաև Ադրբեջանը: Այնտեղ բնակվող ադրբեջանցիների՝ յուրաքանչյուր նոր ծնված երեխայի «նրանք 5000 ռուբլի էին տալիս»:

Ինչպե՞ս է պատկերացնում ԼՂ հարցի կարգավորումը խորհրդային ժամանակների Հայաստանի պետական գործիչը. «Իմ անձնական տեսակետներով, այսօր քննարկվող տարբերակները Հայաստանին չեն բավարարում: Ղարաբաղը երբեք չի կարող լինել Ադրբեջանի կազմում: Շուշիի մասին են խոսում: Ով տիրապետում է Շուշին, նա տիրապետում է Ղարաբաղը: Ով տիրապետում է Ղարաբաղը, նա տիրապետում է Չանգեզուրը: Լաչինի, Քելբաջարի մասին խոսք լինել չի կարող: Չանգեզուրի մի մասը պետք է միացվի Հայաստանին: Ադդամի, Շահումյանի, Գետաշենի մասին խոսք լինել չի կարող: Մրանք անվտանգության երաշխիքներ են: Քռի ձախ ափին 200 հայկական գյուղ ունեինք: Ադրբեջանում մեկ սլն հայ էր բնակվում: Ո՞ր են այդ հայերը: Մենք չկարողացանք քարոզչական պատերազմում ասել, որ այս հողերը մերն են: Լեւոն Տեր-Պետրոսյանը երբ իմացավ, որ Շուշին ազատագրել ենք, գույնը գցեց: Պետք է Քյուրդամիրն ու Եվլախը եւս ազատագրեինք»:

Ալեքսան Կիրակոսյանը սրտնեղում է. «Մենք քարոզչական պատերազմում տանուլ ենք տվել: Ալիեի իշխանության ժամանակ 179 հազար հայեր տեղահանվեցին Խորհրդային Ադրբեջանից: Անդրկովկասում Թիֆլիսից հետո Շուշին մշակութային երկրորդ կենտրոնն էր: Այսօր ով է հիշում, որ նահանգապետ Սուլթանովը տասնյակ հազար հայեր կոտորեց: Ամբողջությամբ սրի քաշվեց Շուշիի հայ բնակչությունը...»:

ԹԱԹՈՒԼ ՀԱԿՈՒՅԱՆ -Ազգ-

# Հայաստան, Իրան եւ Հունաստան արժափն գործերի նախարարների հերթական հանդիպումը



Մարտի 9-ին Աթենքում, Հայաստանի, Իրանի եւ Հունաստանի արժափն գործերի (ԱԳ) նախարարների հերթական հանդիպման ավարտին, ստորագրվել է եռակողմ համագործակցության ընդլայնման հուշագիր: Հունաստանի ԱԳ նախարար Պապանդերունցն նիստը, որը փաստորեն կայացել է շուրջ 3 տարի ընդմիջումով /նախորդը տեղի է ունեցել 1998թ./, խիստ կառուցողական բնութագրելով, նշել է, որ այն վերաբերում է տնտեսական, գիտական, էներգետիկայի եւ զբոսաշրջության ոլորտներում եռակողմ համագործակցությանը: Նա շեշտել է, որ Հունաստանի Եվրամիության /ԵՄ/ անդամ լինելու հանգամանքը կնպաստի Իրանի եւ Հայաստանի կապերի ընդլայնմանը ԵՄ-ի հետ: Իրանի ԱԳ նախարար Քամալ Խարազին հայտնել է, որ հաջորդ ժողովի շրջանակներում, որը տեղի է ունենալու Թեհրանում, ձեռնարկվելու է երեք երկրների գործարանների միություն: Կողմերը միաժամանակ շեշտել են, որ առանց քաղաքական շփումների, տնտեսական ոլորտում կապերի ընդլայնումն ու ամրապնդումն անիրականանալի է:

Թեեւ առ այսօր կողմերի միջեւ ձեռք բերված պայմանավորվածությունների եւ ստորագրված փաստաթղթերի կյանքի կոչման ուղղությամբ գործնական, տեսանելի քայլեր չեն կատարվել, աթենքյան նիստը եւս իր վրա էր սեւեռել միջազգային զանգվածային լրատվության միջոցների /ՁԼՄ/ ուշադրությունը, որոնք ակնհայտորեն կարեւորում են Աթենքում ստորագրված հուշագիրը՝ թերեւս հաշվի առնելով մաս-

նակից երկրների աշխարհաքաղաքական դիրքը: Հուշագիրը կարեւորվում է նաեւ, ինչպես հաճախ նշվում է, տարածաշրջանային ուժերի ջանքերով վերսկսված նոր «մեծ խաղի» համատեքստում: Եթե 19-րդ դարի «մեծ խաղի» գլխավոր դերակատարները ռուսական եւ բրիտանական կայսրություններն էին, ապա այսօր ԱՄՆ-ն եւ Ռուսաստանը են: Վերջինիս տարածաշրջանային դաշնակիցները՝ Թուրքիան, Իսրայելը եւ Ադրբեջանը, գործնականում ռազմաքաղաքական ասպարեզում սերտորեն համագործակցում են, մինչդեռ Ռուսաստանը ջանքեր է գործադրում Իրան-Հունաստան-Հայաստան համագործակցություն ստեղծելու նպատակով, ինչի համար եթե տնտեսական առումով հնարավորություններ կան, ապա ռազմականի՝ ոչ: Մոսկվային հաջողվել է հակադիր ճակատ ստեղծելու լուրջ քայլ կատարել, ինչպես շեշտում են վերլուծաբաններից ոմանք, քանզի ՆԱՏՕ-ի անդամ Հունաստանը, մեղմ ասած, հազիվ թե դիրքավորվի ընդդեմ այդ կազմակերպության եւ Ամերիկայի Միացյալ Նահանգների /ԱՄՆ/: Ավելին, Հունաստանը ի վիճակի չէ անգամ ԱՄՆ-ին ոչ ցանկալի որեւէ երկրի հետ պաշտպանության ոլորտում համագործակցելու, դա են վկայում փաստերը:

1999թ. հունիսի վերջին, Հունաստանի պաշտպանության նախարարի թեհրանյան պաշտոնական այցի ընթացքում պայմանավորվածություն էր ձեռք բերվել Հունաստան-Իրան պաշտպանության համաձայնագիր կնքելու, որը պետք է ստորա-

գրվեր նույն թվականի հուլիսի 12-ին Աթենքում: Դեռեւս չստորագրված համաձայնագիրը միջազգային ՁԼՄ-ների եւ վերլուծաբանների լուրջ քննարկումների առարկա էր դարձել: Ոմանք շեշտում էին, թե պաշտպանության ոլորտում Իրան-Հունաստան համագործակցությունը զգալի փոփոխություն կառաջացնի տարածաշրջանային փոխհարաբերություններում: Մյուսները համոզված էին, որ համագործակցությունը խիստ զայրացնելու է Անկարային: Ավելի «հեռատեսները» քննարկում էին համաձայնագրի հավանական ազդեցության հարցն Անդրկովկասում եւ տարածաշրջանում Մոսկվայի վարած քաղաքականության վրա: Մինչդեռ քաղաքագետները աշխուժորեն քննարկում էին կնքվելիք համաձայնագրի նշանակության եւ դրանից բխող հետեւանքների հարցերը, գրեթե ուշադրությունից դուրս թողնելով ԱՄՆ-ի՝ ՆԱՏՕ-ի առաջնորդի հնարավոր հակազդեցությունը, իսկ Վաշինգտոնը մտահոգություն հայտնելով այդ առնչությամբ, Աթենքից բացատրություն պահանջեց: Վերջինս հավաստիացնելով, թե Թեհրանի հետ պաշտպանության ոլորտում համագործակցելու մտադրություն երբեք չի ունեցել, հայտարարեց, որ տարածված տեղեկությունն իրականությանը չի համապատասխանում: Հետեւաբար այսօր նշել, թե ձեռնարկվում է Իրան-Հունաստան-Հայաստան առանցք ընդդեմ Թուրքիա-Իսրայել-Ադրբեջան առանցքի՝ առնվազն միամտություն կլինի:

Էմմա Բեգիջանյան

### Իրանը մտադիր է կոնսուլտացիաներ վարել

Նոյյան տապան

Ապրիլի 11-ին Բաքվի (Gazet) թերթը հրապարակել է հարցազրույց Ադրբեջանում Իրանի դեսպանության մամլո քարտուղար Իզգաթուլահ Ջալալիի հետ: Հարցազրույցում, մասնավորապես, Ջալալին նշել է, որ պաշտոնական Թեհրանը կարող է սկսել կոնսուլտացիաներ (*մասնագետների ներկայացուցիչների խորհրդակցություն*) վարել Հայաստանի եւ Ադրբեջանի հետ»: Կոնսուլտացիաների ընթացքում, ընդգծել է Ջալալին, «իրանական կողմը կրնար կիրառել Իրանի մասնակցությունը Ղարաբաղյան հակամարտության կարգավորմանը ԵԱՀԿ Մինսկի խմբի հետ միասին»: Ըստ իրանական դիվանագետի՝ «Իրանը կարծում է, որ լինելով տարածաշրջանի կարեւորագույն երկրներից մեկը, նա անպատճառ պետք է մասնակցի Ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացին: Իրանը պատրաստ է ցուցադրել իր շահագրգռվածությունը խաղաղ կարգավորման հասնելու հարցում, սակայն այդ հարցում հարկավոր է նաեւ բանակցային գործընթացի կողմերի համաձայնությունը», - ընդգծել է Ադրբեջանում ԻԻՀ դեսպանության մամլո քարտուղարը:

### «Ադրբեջանը միշտ պրոբլեմներ է ստեղծում»

Իրանի ԱԳՆ խոսնակ Հ.Ասեֆին հասկացրել է, որ Ադրբեջանի նախագահ Ալիեւի պաշտոնական այցը Թեհրան, որ նախատեսված է հունիսին, արդեն չորրորդ անգամ կհետաձգվի: Ադրբեջանում ՆԱՏՕ-ի կամ Թուրքիայի զորքեր տեղակայելու մասին խոսակցությունն իսկ բավական է, որպեսզի սրվեն Բաքու-Թեհրան հարաբերությունները: Խոսնակ Ասեֆին «Գորանե Էմրուզ» թերթին տված հարցազրույցում ասել է. «Այն օրվանից, երբ այդ տարածքը դարձավ անկախ, Իրանի համար միայն պրոբլեմներ է ստեղծում, ներառյալ այն, որ Ադրբեջանում ազատորեն գործում են պանթուրքական խմբեր: Բայց հենց որ Ալիեւին ինչ-որ բան է պետք լինում, ասում է՝ ես ծնվել եմ իրանցիների մեջ, շիա մահմեդական եմ»:

### Դոլաթաբադի.

*Իրանում որեւէ սահմանափակում չկա Հայաստանի հետ տնտեսական համագործակցության զարգացման համար*


Իրան-Հայաստան երկկողմ հարաբերությունները առավել զարգացնելու մտադրությամբ վերջերս Իրանի իսլամական Հանրապետության արտգործնախարարի խորհրդական, ԱԳՆ ԱՊՀ գլխավոր վարչության պետ պարոն Դոլաթաբադին մեկնեց Հայաստան: Պարոն Դոլաթաբադին Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի նախագահ Արմեն Խաչատրյանի հետ հանդիպելիս գրուցել է հայ-իրանական տնտեսական համագործակցության խնդիրների շուրջ: Երկկողմ հարաբերությունների զարգացման համար կարեւոր է համարվել հատկապես օրենսդրությունի միջոցով համագործակցությունը, որոնց աջակցության դեպքում միայն գործադիր իշխանությունների ջանքերն առավել արդյունավետ կլինեն: Ընդ-

գրծվել է խորհրդարանների դեկլարների, ինչպես նաեւ արտաքին հարաբերությունների հանձնաժողովների, բարեկամության խմբերի փոխայցերի կազմակերպման, տեղեկատվության փոխանակման մեխանիզմների կատարելագործման անհրաժեշտությունը: Ըստ Արմեն Խաչատրյանի, հայ խորհրդարանականները մեծ նշանակություն են տալիս Իրանի հետ համագործակցության զարգացմանը եւ հնարավոր բոլոր քայլերը կձեռնարկեն այդ ուղղությամբ: Հայաստանի խորհրդարանի դեկլարը նաեւ կարծիք է հայտնել, որ երկկողմ հարաբերությունների արդյունավետ զարգացման համար պետք է ապահովվել ամուր տնտեսական բազա: Պարոն Դոլաթաբադին իր հերթին նշել է, որ Իրանում որեւէ

սահմանափակում չկա Հայաստանի հետ տնտեսական համագործակցության զարգացման համար: Դրա վկայությունն են բազմաթիվ տնտեսական նախաձեռնությունները, կոնկրետ ներդրումային ծրագրեր իրականացնելու իրանական կողմի պատրաստակամությունը: Ըստ նրա, Իրանում հույս ունեն, որ ականատես կլինեն այս տարի ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանի այցի ընթացքում նախագահների մակարդակով արդյունավետ որոշումների կայացմանը: Հանդիպմանը մասնակցել են Հայաստանի Ազգային Ժողովի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ Հովհաննես Հովհաննիսյանը եւ Հայաստանում Իրանի արտակարգ եւ լիազոր դեսպան Մոհամմադ Քոլեյնին:

Մ. Խաթամի.

# Հայաստանը Եվրոպային կապող լավագույն ճանապարհն է



**Նախագահ Խաթամին ընդունեց  
Գագիկ Հարությունյանին**

**Ի**րանի Իսլամական Հանրապետության նախագահ Մոհամմադ Խաթամին Հայաստանի Սահմանադրական դատարանի նախագահ Գագիկ Հարությունյանի հետ հանդիպմանը, Իրան-Հայաստան հարաբերությունները որակել է կարելու: Անդրադառնալով Կովկասի եւ Կենտրոնական Ասիայի զարգացման, բարգավաճման եւ այս տարածաշրջանին սպառնացող խնդիրներին, նախագահ Խաթամին ասել է, որ «անվտանգության եւ կայունության երաշխիքները պետք է լինեն առանց օտար միջամտության, երկկողմ համագործակցությամբ»:  
«Իրան-Հայաստան զազատարի, Քաջարանի թունելի կառուցումը Իրան-Հայաստան երկկողմ հարաբերություն-

ներն ամրապնդող գործոններ են», ասել է Խաթամին, առանձնապես կարելու լով տրանսպորտի եւ հաղորդակցության ոլորտում Երեւան-Թեհրան համագործակցությունը, Հյուսիս-Հարավ միջանցքի ամրապնդումը:

Ըստ նախագահի, Հայաստանը Եվրոպային կապող լավագույն ճանապարհն է: «Հուսով եմ՝ Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ խնդիրը կլուծվի առանց օտար միջամտության, տրամաբանությամբ եւ խոհեմությամբ, ուղղակի բանակցությունների շրջանակներում, հաշվի առնելով հայ եւ ադրբեջանցի ժողովուրդների, տարածաշրջանի շահերը», շեշտել է Իրանի նախագահը:

Գ. Հարությունյանը եւս սույն հան-

դիման ընթացում շեշտելով Հայաստանի իշխանությունների ցանկությունը երկկողմ հարաբերությունների ամրապնդման եւ զարգացման գործընթացին, նախագահին է հանձնել Ռոբերտ Քոչարյանի գրավոր դասգամը:

Գ. Հարությունյանը իր ֆանի օրյա ճամբորդության ընթացքին հանդիպումներ է ունեցել Իրանի բարձրաստիճան դասասիանասունների դրանց շարքում, Ազգային Անվտանգության Խորհրդի նախագահ Ռոհանիի, Պահադան Խորհրդի նախագահ այաթ. Ջաննաթի-ի եւ Իսլ. Խորհրդարանի նախագահ հոջ. Քառուբիի հետ: Հասկանալի է որ Գ. Հարությունյանը դասադան Խորհրդի հրավերով ադրիլի 10-ին Իրան էր ճամբորդել:

## Չկա հարավային անկախ Ադրբեջան

**Ա**դրբեջանի որոշ ուժեր բարձրացնում են Հարավային Ադրբեջանի անկախության հարցը, ինչը գլխավոր պատճառն է, որ առ այսօր Թավրիզում ադրբեջանական հյուպատոսարան չի բացվել: Ըստ ադրբեջանական ANS գործակալության, իրանական «Շամսե Թաբրիզ» թերթին տված հարցազրույցում Իրանում Ադրբեջանի դեսպան Աբասալի Հասանովն ասել է, որ պաշտոնական Բաքուն մերժում է «Հարավային Ադրբեջան» եւ «Հարավային Ադրբեջանի անկախություն» գաղափարները: Նման պահանջներ ներկայացնում էր 1992-93թթ. Ժողովրդական ճակատ կուսակցության կառավարությունը, եւ այժմ դրանք վնասում են իրանա-ադրբեջանական հարաբերություններին: Դրանից էլ օգտվում է Հայաստանը եւ ակտիվորեն զարգացնում է Իրանի հետ իր հարաբերությունները, ասել է Ադրբեջանի դեսպանը: Հասանովը հավաստել է, որ «Իրանը հայրենիքն է ադրբեջանական ծագում ունեցող իրանցիների, եւ թշնամական ամեն մի արտահայտություն վնասում է երկկողմ հարաբերություններին»:  
Իրանում Ադրբեջանի դեսպանի նման հայտարարու-

թյունները մեծ վրդովմունք են առաջացրել Ադրբեջանում: Հասանովի հայտարարությունները «Էխս» թերթին մեկնաբանել է Իրանում Ադրբեջանի նախկին դեսպան Ալիյար Սաֆարիին: Վերջինն նշել է, որ նման հայտարարություններ Հասանովն անցյալում էլ է արել: Մասնավորապես, ըստ Սաֆարիի, Ադրբեջանի ներկայիս դեսպանը «525-րդ» թերթին տված հարցազրույցում ադրբեջանական լրատվական միջոցներին մեղադրել է հակաիրանական նյութեր հրապարակելու մեջ: Ա. Սաֆարիին նշել է, որ իրանական թերթերն ավելի խիստ հակաադրբեջանական քարոզչություն են վարում, քան ադրբեջանականը՝ Իրանի դեմ: «Իրանական թերթերում հրապարակումներ են լույս տեսնում, որտեղ ադրբեջանական մի շարք քաղաքներ համարվում են Իրանին պատկանող տարածքներ, - շարունակում է Իրանում Ադրբեջանի նախկին դեսպանը, - երբ եւ աշխատում էի Թեհրանում, բազմիցս մերժումներ են հրապարակել այս կապակցությամբ, իսկ մեր ներկայիս դեսպանը նույնիսկ ադրբեջանական լրատվամիջոցներին է մեղադրում չափազանց կոշտության մեջ»:

# Իրանը հաստատական է նախկինում իր տված հայտարարությունների եւ խոստումների առումով

«**Ի**րան - Հայաստան գազամուղի շինարարության առումով Իրանական կողմը հաստատական է նախկինում իր տված ստորագրությունների, հայտարարությունների եւ խոստումների համար, եվ կարելու է այստեղ հայկական կողմի առավել մեծ պատրաստվածությունը գործը սկսելու համար, ինչպես նաեւ խոշոր ընկերությունների ներգրավման հարցը», 17 ապրիլին հայտարարեց Հայաստանում Իրանի արտակարգ եւ լիազոր դեսպան Մոհամմադ Ֆարհադ Քոլեյնին:



Հայաստանի Հանրապետության Գիտությունների Ազգային Ակադեմիայի /ՀՀԳԱԱ/ կազմակերպված «Հայաստանի էներգետիկ ապագան» թեմայով կլոր սեղանին հրավիրված դեսպանը լրագրողների հարցերին պատասխանելով ասաց, որ այսօր Հայաստանի Հանրապետության էներգետիկայի նախարար Կարեն Գալուստյանը մեկնել է Թեհրան՝ Իրան-Հայաստան գազամուղի կապակցությամբ Իրանի Իսլամական Հանրապետության էներգետիկայի նախարարության հետ բանակցություններ վարելու նպատակով: Պրն. Քոլեյնին նշեց, որ հանդիպման ստույգ արդյունքները հայտ-

նի կդառնան նախարարի վերադարձից հետո միայն: Այդուհանդերձ, նա հավաստիացրեց, որ Իրանի կողմից առկա է շինարարությունն իրականացնելու կամքը եւ շարունակվում են հետետողական աշխատանքները: Մ. Քոլեյնիի կարծիքով, այսօր ռուսական եւ եվրոպական կողմերը ավելի պատրաստ են այդ գործին, եւ, իհարկե, հեռավոր երկրների քաղաքացիները եւս կարող են ներդրումներ կատարել գազամուղի շինարարության համար:

«Թվում է, թե այսօր դեռեւս ֆինանսավորման խնդիր գոյություն չունի, այլ ավելի շատ կարելու է փոխըմբռնումը տարածաշրջանում՝ կայունության, խաղաղության եւ ավելի մեծ համագործակցության համար», -նկատեց նա: Հայաստանի եւ Իրանի էներգետիկ ոլորտների միջեւ սերտ համագործակցություն է սկսվել: Գազամուղի շինարարությունից բացի, կա նաեւ էլեկտրաէներգիայի փոխանակման համագործակցությունը երկու երկրների միջեւ, որի ծավալներն այս տարի, դեսպանի կարծիքով, կընդլայնվեն: Կանխատեսումներ կան, որ այս բնագավառում առաջիկայում ավելի մեծ ներդրումներ են կատարվելու: Ինչ վերաբերում է սակագներին, ապա, դեսպանի հավաստմամբ, Իրանը հետետողական է պայմանագրերով ամրագրված սկզբունքների նկատմամբ եւ հաստատական պահպանում է սակագրնային քաղաքականությունը: Կովկասի էներգետիկ կայուն համակարգի ձեւավորումը, Մ. Քոլեյնու խոսքերով, կնպաստի տարածաշրջանային կայունությանն ու զարգացմանը: Իսկ Կովկասի հետ Իրանի հարաբերություններում Հայաստանն ունի իր առանձնահատուկ տեղը եւ այն առաջիկայում ավելի կամրապնդվի:

## Սերժ Սարգսյանը ընդունեց Իրանի դեսպանին

**Ա**պրիլի 16-ին Հայաստանի Հանրապետության նախագահին առընթեր Ազգային անվտանգության խորհրդի քարտուղար, պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանն ընդունել է Հայաստանի Հանրապետությունում Իրանի Իսլամական Հանրապետության դեսպան Մոհամմադ Ֆարհադ Քոլեյնին:

Չրույցի շրջանակներում կարծիքներ են փոխանակվել

տարածաշրջանային անվտանգության եւ համագործակցության, հայ-իրանական հարաբերություններին առնչվող խնդիրների շուրջ: Հանդիպման ընթացքում քննարկվել են նաեւ Իրանի Իսլամական Հանրապետության Ազգային անվտանգության բարձրագույն խորհրդի քարտուղարի խորհրդականի՝ Հայաստան կատարելիք այցի հետ կապված տարաբնույթ հարցեր:

